

ሆሊዮት

ገጽ

مارزق

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

السنة التاسعة والعشرون - العدد الرابع - VOL. XXIX N° 4 - 4 (334) 2010، 2010







ԹԻՒԻՆ ՆԻՒԹԵՐՐ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Ս.Ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԻՐ. ՏԱՐԻ, 2010, ԹԻԷ 4 (334)

ԽՄԲԱԳԻՐ
 Կիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աբօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Գ. Թորոյեան, Արմէն Քէօզկէրեան,
 Ներսէս Արք. Բախտիկեան, Բաֆֆի
 Սիւլահեան, Սալբի Լատոյեան
 Եւ շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Արշօ Պալեան

Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան

Colour Separation - Photogravure Paklayan

Կողքի Ձեւաւորում՝ Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ

Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ

«Սեւան» Շէնք, Գ. Յարկ

Հեռ: 01/248043, Fax: 01/260117

E-mail: marzig@homenetmen.org

P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին

հատվածադրի սակն է 3000 Լ.ո.:

Տարեկան բաժանորդագրութեան սակ

ճշդուած է 35000 Լ.ո.:

Լիբանանէն դուրս թերթին

բաժանորդագրութիւնը

կը կատարեն Հ.Ս.Ը.Ս.Ի Սեկուսի

Եւ Շրջանային Վարչութիւնները:

Թերթը ուղղակի Լիբանանէն

կը ստացուի անձնական

բաժանորդագրութեամբ

(Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան

Եւ Եւրոպական երկիրներ \$50,


Ամերիկա Եւ Աւստրալիա՝ \$55):



16

Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Արձագանգ 7
- Անդրադարձ 9
- Մեր տեսակցութիւնները 10
- Պատմութիւն 12
- Խոստմնալից դէմքեր 15
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 16
- Մեր Կորուստները 37



27

ՄՏԱՅԱՆՔ

«Մարզիկ»-ի խմբագրականներու Ա. հատորը (Սպաներէն թարգմանութեամբ)

Թարգմանութիւնը կատարեց Աբրահամ Ահարոնեան:

Պուէնոս Այրես, Արժանթին, 2009, 226 էջ:

ԲԱԺԻՆՆԵՐ

- Մոնտիալ 2010 3
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



Խ
Մ
Բ
Ա
Գ
Ր
Ն
Է
Ն
Ն

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

(Բ.)

Մեր կեանքին կշռոյթը այսօր կապուած է համաշխարհայնացումի երեւոյթին հետ, որ իր հակակշիռին տակ առած է մեր ընկերութեան տնտեսական, էլեւմտական, ընկերային, քաղաքական եւ մշակութային կեանքի տարբեր երեսները՝ փորձելով աշխարհի տարբեր ժողովուրդները համարկել բազմազգեան մէկ մշակոյթի մէջ, որ շատերու կողմէ կրնայ մերժուիլ, իբրեւ մշակութային կայսերապաշտութեան մէկ արտայայտութիւն, իսկ ուրիշներու կողմէ կրնայ գնահատուիլ, իբրեւ մշակոյթներու մերձեցման, փոխադարձ հարստացման եւ զիրար լրացման ձգտող համընդհանուր շարժում:


Իբրեւ ընդհանուր երեւոյթ, կասկած չկայ, որ հաղորդակցութեան միջոցներու սրընթաց զարգացումէն մեծագոյն օգտուողը այսօրուան նոր սերունդն է, որ համակարգիչին աւելի շատ եւ շուտ կը տիրապետէ՝ քան լեզուներուն: Հաղորդակցութեան միջոցներու ստեղծած անսահման կարելիութիւններով, այսօր շատ աւելի դիրին կը դառնայ տեղեկութիւններու եւ գաղափարներու փոխանակումը երկիրէ երկիր: Հետեւաբար, կղզիացած եւ իրենք իրենց վրայ փակուած երիտասարդական շրջանակներու դժուար թէ կարելի ըլլայ հանդիպիլ այլեւս: Ամէն մարդ տեղեկութիւն ունի ամէն ինչի մասին: Փորձառութիւններու փոխանակումը իրարու կը մօտեցնէ տարբեր մշակոյթի պատկանող տղաք ու աղջիկներ, որոնց համար աշխարհը օրէ օր աւելի կը փոքրանայ: Իրարու մօտենալով, իրարու հետ հաղորդակցելով, երիտասարդներ կը յայտնաբերեն աշխարհը, կը ծանցնան զիրար, կը դառնան աւելի հանդուրժող, նուա՛գ ցեղապաշտ ու այլամերժ:

Համաշխարհայնացումի այս առա-

ջին բարիքը ինքնին ծնունդ կու տայ այլ բարիքի մը, երբ համայնակուլ այս շարժումէն պաշտպանուելու եւ իրենց սեփական ինքնութիւնը պահպանելու բնական հակազդեցութեան մէջ, երիտասարդներ դէպի արմատներ վերադարձ մը կը կատարեն, իրենց ազգային արժէքները վերարժեւորումի եւ վերանորոգումի կ'ենթարկեն: Ի զուր չէ, որ որքան համաշխարհայնացումի հոսանքը զօրանայ՝ այնքան աւելի քիչ մը ամէն տեղ թափ կ'առնեն ազգայնական-անջատողական տրամադրութիւնները, կրօնական վերազարթումի երեւոյթները, էթնիկ փոքրամասնութիւններու իրաւունքներու, լեզուական թէ մշակութային ինքնութեան պաշտպանութեան նուիրուած շարժումները, որոնց բոլորին ռահվիրաները վերջին հաշուով կը հանդիսանան այսօրուան երիտասարդները:

Անշուշտ, համաձայն չենք ըլլար արեւմտեան կարգ մը տեսաբաններու հետ, որոնք համաշխարհայնացած այսօրուան երիտասարդութիւնը կ'ուզեն բաժնուած տեսնել երկու մասի. *Technoculture*՝ արհեստագիտական մշակոյթով երիտասարդներ եւ *Terrorculture*՝ այսպէս կոչուած ահաբեկչական մշակոյթով երիտասարդներ, որոնք խորքին մէջ ուրիշ բան չեն մարմնաւորեր եթէ ոչ՝ անիրաւուած եւ կեղեքուած ժողովուրդներու արդար պայքարը ընդդէմ զիրենք հարստահարող ուժերուն:

Համաշխարհայնացումի բարիքներէն կրնան օգտուիլ եւ կ'օգտուին բոլորը եւ, բնական է, որ ազգային ազատագրական պայքար մղող կամ մարդկային վսեմ արժէքներու համար մարտնչող երիտասարդներ եւ անոնց ետին կանգնող շարժումներ իրենց ի վնաս ստեղծուած զէնքերը գործածեն նոյնի՛նքն զանոնք ստեղծողներուն դէմ:



ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Հարաւային Ափրիկէ-Մեքսիքա բացման մրցումով սկսած եւ 11 Յուլիսին Հոլանտա-Սպանիա աւարտականով եզրափակուած ափրիկեան Մոնտիալը արդէն պատմութիւն է:

Մէկ ամիս շարունակ, 64 մրցումներ գրաւեցին աշխարհի մարզասէր լայն հասարակութեան ուշադրութիւնը: Յաղթանակներ, անակնկալ պարտութիւններ, նոր մրցանիշներ, հետաքրքրական դրուագներ եւ վերջապէս՝ նոր ախոյեան:

Տակաւին երկար պիտի գրուի այս Մոնտիալին մասին: Տարբեր մեկնաբանութիւններ պիտի ըլլան, տարբեր կարծիքներ պիտի յայտնուին: Սակայն մէկ իրողութիւն կայ, որ այս բոլորը պիտի կատարուին խումբերու արձանագրած արդիւնքներու լոյսին տակ:

Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Ա. խմբակին մէջ, բնականաբար, ամէնէն անակնկալը Ֆրանսայի երկու պարտութիւններն ու Մոնտիալէն կանուխ հրաժեշտ տալն էր: Թէեւ Ֆրանսացիք բաւական լաւ կազմ ու-

նէին, սակայն անոնց «ներքին» խնդիրները ծանր ազդեցին անոնց մակարդակին վրայ: Անոնք առանց յաղթանակի եւ միայն մէկ կող նշանակելով գլխիկոր հեռացան Մոնտիալէն: Երկրորդ անակնկալը Ուրուկուէյի յաղթանակներն էին: Առաջին մրցումին, Ֆրանսայի դէմ, անոնք չպարտուելով ձեռք բերին ինքնավստահութիւն, եւ յաջորդական յաղթանակներ արձանագրելով հասան կիսաւարտական: Մեքսիքացիք նոյնպէս բաւական տպաւորիչ էին այս խմբակին մէջ: Մինչ հիւրընկալ ափրիկէցիք յուսախաբ ըրին իրենց համակիրները եւ չյաջողեցան անցնիլ երկրորդ հանգրուան:

Բ. խմբակին մէջ, Արժանթին դժուարութիւն չունեցաւ: Ան իր կատարած երեք մրցումները աւարտեց յաղթանակով: Հոս մեծագոյն անակնկալը Հարաւային Քորէան էր, որ յաջողեցաւ պարտութեան մատնել Յունաստանն ու Նիճերիան: Նիճերիացիք ոչինչ ունէին ներկայացնելու այս Մոնտիալին: Անոնք իրենց նախորդ մասնակցութիւններուն փայլքը չկրցան տալ: Մինչ յոյները ո՛չ միայն յաջողեցան կող նշանակել, այլեւ արձանագրեցին Մոնտիալի իրենց առաջին եւ միակ յաղթանակը, որ սակայն բաւարար չեղաւ անցնելու երկրորդ հանգրուան:

Գ. խմբակէն ներս անգլիացիք չտպաւորեցին: Առաջին մրցումին անակնկալ հաւասարութիւն մը Մ. Նահանգներու հետ, ապա հաւասարութիւն մը Ալճերիոյ հետ, անոնք սպասեցին վերջին մրցումին, որպէսզի կարենան անցնիլ երկրորդ



հանգրուան: Մ. Նահանգներու կազմը ներկայացուց տոկուն ֆուլթպուլ մը, հեռու ֆուլթպուլային գեղեցկութենէ: Ալճերիացիք, ինչպէս ափրիկեան գրեթէ բոլոր կազմերը, յուսախաբ ըրին իրենց համակիրները: Իսկ Սլովենիա մետասաներորդ պահուն դուրս մնաց երկրորդ հանգրուանէն:

Դ. խմբակը նոյնպէս անակնկալներ ստեղծեց: Գերմանացիք միայն վերջին մրցումին ապահովեցին իրենց տոմսը: Անոնք առաջին մրցումին հանգիստ յաղթանակ մը տանելէ ետք, պարտուեցան սերպերէն, որոնք մնացեալ երկու մրցումները պարտուեցան: Աւստրալիացիք առաջին մրցումին ամօթալի պարտութիւն մը կրելէ ետք, երկրորդ մրցումին հաւասարեցան Ղանայի հետ, իսկ յաջորդ մրցումին յաղթեցին սերպերուն: Մինչ Ղանա, որ յաղթած էր սերպերուն, եղաւ ափրիկեան միակ կազմը որ անցաւ երկրորդ հանգրուան: Պէտք ոչել նաեւ, որ ղանացիք ներկայացուցին բաւական գեղեցիկ ֆուլթպուլ մը:

Ե. խմբակին մէջ, Ճափոն ստեղծեց մեծագոյն անակնկալը: Դանիոյ եւ Քամբուրունի նման խումբերու ներկայութեամբ, ճափոնցիք անցան երկրորդ հանգրուան, պարտութեան մատնելէ ետք վերոնշեալ երկուքը: Խմբակին պարագլուխը՝ Հոլանտա եղաւ անսխալական: Հոլանտա իր երեք մրցումները յաղթանակներով աւարտեց եւ գրաւեց պարագլուխի դիրքը: Մինչ Դանիա-Ճափոն վճռորոշ մրցումին, ասիացիք ֆուլթպուլի դաս մը տուին դանիացիներուն: «Ռոլիկանները» ամօթահար հեռացան: Քամբուրուն կրեց երեք պարտութիւն եւ միացաւ կանուխ տուն վերադարձող կազմերուն:

Զ. խմբակին մէջ, իտալացիք եղան մեծագոյն ճախողութիւնը: Անոնք առաջին երկու մրցումներուն հաւասարութիւն արձանագրելէ ետք, Սլովաքիայէն պարտուելով հրաժեշտ տուին Մոնտիալին: Իտալիոյ այս արդիւնքները այնքան ալ անակնկալ չէին ֆուլթպուլի մասնագէտներուն համար: Նոր Զելանտա բաւական դրական արդիւնքներով մեկնեցաւ իր

երկիրը: Ան այս Մոնտիալի միակ կազմը եղաւ որ պարտութիւն չկրեց: Փարակուէյի կազմը ներկայացուց իր բնական ֆուլթպուլը եւ յաջողեցաւ հասնիլ երկրորդ հանգրուան: Մինչ սլովաքիացիք վերջին եւ վճռական մրցումին յաղթեցին իտալիոյ եւ անցան յաջորդ հանգրուան:

Է. խմբակը անակնկալներ չունեցաւ: Պրագիլ առաջին երկու մրցումներուն յաղթանակներ արձանագրեց եւ ապահովեց երկրորդ հանգրուանի իր տոմսը: Փորթուգալցիք արձանագրեցին մրցաշարքի ամէնէն մեծ արդիւնքով յաղթանակը, երբ 7-0 արդիւնքով պարտութեան մատնեցին Հարաւային Քորէան: Փորթուգալցիք ընկերացան Պրագիլի՝ երկրորդ հանգրուան անցնելու: Ասիացիք՝ Հարաւային Քորէա, եղաւ միակ կազմը, որ իր երեք մրցումները աւարտեց պարտութեամբ: Անոնք չյաջողեցան կրկնել աւելի քան քառասուն տարիներ առաջ իրենց կատարած սխրանքը: Մինչ Փղոսկրեայ Ափունք նոյնպէս չտպաւորեց եւ կանուխ վերադարձաւ հայրենիք:

Ը. խմբակին մէջ, սպանացիք առաջին մրցումին Զուիցերիայէն անակնկալ պարտութիւն մը կրելէ ետք, յաջորդ երկու մրցումներուն յաջողեցան իրենք զիրենք պարտադրել եւ անցնիլ երկրորդ հանգրուան: Զուիցերիա առաջին մրցումին յաղթելէ ետք, կը կարծուէր թէ պիտի յաջողի հասնիլ երկրորդ հանգրուան, սակայն գուիցերիացիք պարտուեցան Զիլիէն, իսկ երրորդ մրցումին անոնք չկրցան յաղթել Հոնտուրասի: Զիլիցիք երկու յաղթանակ արձանագրեցին եւ անցան Բ. հանգրուան: Մինչ Հոնտուրաս չկրցաւ տպաւորել, այնպէս ինչպէս դրական արդիւնքներ արձանագրած էր Սպանիոյ Մոնտիալին, քսանութ տարիներ առաջ:

Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Ֆուլթպուլի մասնագէտ եւ Սպանիոյ հաւաքականի նախկին մարզիչ Լուիս Արակոնէս, ի տես Սպանիոյ առաջին հանգրու-

լանի մրցումներուն, Չիլիի մրցումին նախօրեակին կ'ըսէր. «Մոնտիալը կը սկսի երկրորդ հանգրուանին. առաջին հանգրուանին խումբերը կը փորձեն դուրս չմնալ»:

Այս խօսքերը բաւական դիպուկ են: Ափրիկեան Մոնտիալի երկրորդ հանգրուանը եղաւ առաջինին հակապատկերը: Ո՛չ մէկ անակնկալ արձանագրուեցաւ:

Ուրուկուէյ-Հարաւային Քորէա մրցումին, ամերիկացիք կրցան պարտութեան մատնել ասիացիները: Ուրուկուէյցիք ներկայացուցին ներդաշնակ ֆուլթայոլ մը:

Արժանթին-Մեքսիքա մրցումը բաւական «տաք» էր: Մրցումին առաջին խնդրայարոյց կոլէն անկախ, խումբերը երկուստեք լաւ ֆուլթայոլ հրամցուցին մարզասէրներուն եւ մարզիչ Մարատոնայի կազմը տարաւ վերջնական յաղթանակը:

Գերմանիա-Անգլիա մրցումը վստահաբար պիտի մնայ այս Մոնտիալին ամէնէն հարցականը: Ճիշդ է որ գերմանացիք յաղթեցին եւ դուրս ձգեցին տիտղոսին գլխաւոր յաւակնորդներէն Անգլիան, սակայն Անգլիոյ նշանակած երկրորդ կոլը, որ անբացատրելիօրէն մերժուեցաւ իրաւարարին կողմէ, երկար ժամանակ մամուլի քննարկումի նիւթ եղաւ:

Ղանա-Ամերիկա մրցումը աւելի շատ նման էր «մկաններու» մրցումի: Երկու կազմերն ալ ֆիզիքապէս զօրաւոր, ամբողջ երկու ժամ պայքարեցան: Ղանացիք յաղթեցին շնորհիւ իրենց կարգ մը բանալի խաղացողներուն փորձառութեան:

Հոլանտա-Սլովաքիա մրցումը անցաւ հոլանտական տիրապետութեամբ: Հոլանտացիք շնորհիւ իրենց յառաջապահներուն փորձառութեան եւ հմտութեան կրցան յաղթանակ տանիլ:

Պրագիլ-Չիլի մրցումը հարաւ-ամերիկեան դասական մրցում մըն էր, ուր ակներեւ էր Պրագիլի գերակայութիւնը: Չիլիցիք «վիրաւոր» ներկայացան դաշտ եւ երեք անպատաս-

խան կոլեր ստանալով հրաժեշտ տուին Մոնտիալին: Անոնք չյաջողեցան կրկնել առաջին հանգրուանի իրենց խաղարկութիւնը:

Փարակուէյցիք դժուարութեամբ կրցան յաղթահարել այս մրցաշարքի մեծագոյն անակնկալը՝ Ճափոնի կազմը: Ամբողջ երկու ժամ խումբերը երկուստեք փորձեցին կոլ նշանակել, սակայն ի վերջոյ փենալթիններով Փարակուէյ յաղթական դուրս գալով վերջ մը տուաւ Ճափոնի յոյսերուն:

Սպանիա-Փորթուգալ մրցումը անցաւ սպանացիներու տիրապետութեամբ: Փորթուգալցիք քանի մը «ամչկոտ» յարձակումներ կրցան կազմակերպել, սակայն անգօր էին դիմադրելու Սպանիոյ յարձակումներուն: Փորթուգալցիք պարտուելով հեռացան մրցաշարքէն:

Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Պրագիլ-Հոլանտա սպասուած մրցումը եղաւ մրցաշարքի ամէնէն հետաքրքրական մրցումներէն մէկը: Պրագիլցիք կրցան առաջին կիսախաղը առնել իրենց տիրապետութեան տակ եւ նշանակել մրցումին առաջին կոլը: Բ. խաղակէսին հոլանտացիք կերպարանափոխուած ներկայացան դաշտ եւ առաջին վայրկեաններուն հաւասարելէ ետք, մրցումը առին իրենց տիրապետութեան տակ, նշանակելով երկրորդ կոլ մը եւ տանելով վերջնական յաղթանակը:

Գերմանիա-Արժանթին մրցումը նոյնպէս եղաւ հետաքրքրական, բայց միակողմանի: Գերմանացիք առաջին վայրկեաններուն կանուխ կոլ մը նշանակելով, մրցումը առին իրենց տիրապետութեան տակ: Մինչ արժանթինցիք, փոխանակ կազմակերպուելու, չկրցան սթափիլ առաջին կոլէն, ու անպատակ ֆուլթայոլ մը խաղալով, երեք կոլ եւս ստանալով հեռացան Մոնտիալէն:

Փարակուէյ-Սպանիա մրցումը եղաւ վերիվայրումներով:

Երկու կազմերն ալ կորսնցուցին փենալթի նշանակելու առիթ: Փարակուէյցիք նշանակեցին նաեւ կոլ մը, որ օֆսայտ նկատուեցաւ, սակայն պէտք է նշել, որ արդար կոլ էր: Ի վերջոյ, Եւրոպայի ախոյեանները կրցան դժուար, բայց կարեւոր յաղթանակ մը տանելով հասնիլ կիսաւարտական:

Ուրուկուէյ-Ղանա մրցումը եւս բաւական «տաք» մրցում մըն էր: Ղանացիք երկար ժամանակ պիտի չմոռնան, որ 120րդ վայրկեանին կորսնցուցին փենալթի մը: Երկու կազմերն ալ ներկայացուցին արագ եւ յարձակումներով հարուստ ֆուլթայոլ: Ակներեւ էր սակայն ափրիկեցիներուն ֆիզիքական առաւելութիւնը: Ի վերջոյ, սակայն, «Երկնային կապոյտ»ները տարին յաղթանակը:



ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Կիսաաւարտականի առաջին մրցումը իր դէմ հանեց Հոլանտան եւ Ուրուկուէյը: Երկու կազմերն ալ բացակայ մարզիկներով դաշտ ներկայացան: Ճիշդ է որ հոլանտացիք յաղթեցին, սակայն Ուրուկուէյի կազմը յամառօրէն պայքարեցաւ: Վերջին քանի մը մրցումներուն ակներեւ դարձաւ Ուրուկուէյի պաշտպանողականին խոցելիութիւնը: Հոլանտացիք օգտագործեցին ներկայացած առիթները եւ խաղի աւարտէն քառորդ ժամ առաջ ճշդեցին իսաղին ճակատագիրը:

Երկրորդ մրցումը՝ Գերմանիա-Սպանիա կրկնութիւնն էր երկու տարի առաջ Եւրոպայի ախոյեանութեան աւարտական մրցումին: Այս մրցումին գերմանացիք հեռու էին նախորդ երկու մրցումներու իրենց մակարդակէն, մինչ սպանացիք լաւապէս կազմակերպուած ու ինքնավստահ դաշտ ներկայանալով «աքցանեցին» գերմանացիները եւ կրցան այս անգամ եւս յաղթել անոնց:

ԵՐՐՈՐԴ-ՉՈՐՐՈՐԴ ԴԻՐՔԻ ՄՐՑՈՒՄԸ

Երրորդ-չորրորդ դիրքի համար մրցեցան Գերմանիա եւ Ուրուկուէյ: Անոնք քառասուն տարիներ առաջ դարձեալ նոյն դիրքին համար մրցած էին եւ գերմանացիք յաղթած էին 1-0 արդիւնքով: Այս մրցումին ալ պատկերը կրկնուեցաւ, հակառակ որ գերմանացիք բացականչելով ներկայացան դաշտ, սակայն իրենք վճռեցին մրցումին ելքը: Ուրուկուէյի պաշտպանողականը եւ մանաւանդ բերդապահը գործեցին սխալ-

ներ, որոնք արժեցին երեք կոլեր: Իսկ Ֆորլանի վերջին վայրկեանի հարուածը, որ զսպուեցաւ բերդին սիւնին կողմէ, երկար ժամանակ պիտի մնայ ֆուլթպուլասէրներու յիշողութեան մէջ:

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Հոլանտա-Սպանիա աւարտականը թէեւ բաւական հետաքրքրական եղաւ, սակայն ֆուլթպուլասէր հասարակութիւնը բաւական յուսախաբ մնաց: Սպանացիք ներկայացուցին գեղեցիկ ֆուլթպուլ, մինչ հոլանտացիք դաշտ ներկայացան սպանացիները ի գին ամէն զոհողութեան կասեցնելու մտադրութեամբ: Մրցումը եղաւ դեղին քարթերով առատ: Երկուստեք ստեղծեցին բազմաթիւ առիթներ: Ճիշդ է որ սպանացիք կրցան աւելի շատ տիրապետել գնդակին եւ աւելի յաճախ յարձակումներ կազմակերպել, սակայն հոլանտացիներու ստեղծած առիթները աւելի վտանգաւոր էին: Մրցումին առաջին իննսուն վայրկեանները անցան սպիտակ հաւասարութեամբ: Երկարաձգման երկրորդ խաղակէսին, արդէն պարզ էր որ հոլանտացիք մրցումին ելքը կ'ուզէին վճռել ըստ բախտի՝ փենալթիներով, մինչ սպանացիք կը թուէին աւելի վճռական ըլլալ, եւ իրապէս ալ, իրաւարարի սուլոցէն քանի մը վայրկեան առաջ, Պարսայի «աստղ»երէն Ինիէսթա նշանակեց կոլ մը, Սպանիոյ նուիրելով իր պատմութեան մէջ առաջին տիտղոսը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

www.europehotel.am

ՂԷՊԻ ՆՈՐ ԵՒ ԱՇԽԱՌՅԺ ԱՊԱԳԱՅ

ԱԹԷՆՔԻ «ԱԶԱՏ ՕՐ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝
Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՏԵՆԱԴՊԻՐ ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ՀԵՏ

Վերջերս, Աթենք այցելեց եւ Յունաստանի շրջանի 65րդ Ներկայացուցչական ժողովին ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Կարպիս Գապասագալեան: Այս առիթով, Աթենքի «Ազատ Օր» օրաթերթը եղբօր հետ կատարեց հարցազրոյց մը, զոր կը ներկայացնենք ստորեւ:



Որո՞նք էին անցնող տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնական աշխատանքները:

- Ինչպէս ծանօթ է, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գործէ քառամեայ նստաշրջանով: Յառաջիկայ տարի, 2011ի Ապրիլին, պիտի աւարտի մեր նստաշրջանը: Ուրեմն, հիմնական աշխատանքներուն մէջ պէտք է նշեմ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական համագումարը, որ 2008ին տեղի ունեցաւ Հայաստանի մէջ, ուր ընդհանրապէս քննուեցան, ուսումնասիրուեցան մեր միութեան սկաուտական ճիւղի հարցերը եւ լուրջ բանաձեւումներ կատարուեցան, յատկապէս սկաուտ-խմբապետներու պատրաստութեան գիտելիքներու ճշդումով:

Ապա, 2009ին, տեղի ունեցան երկու մեծ աշխատանքներ: Առաջինը՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու կազմակերպումն էր, որ առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենար մայր հայրենիքի մէջ: Ինչպէս ծանօթ է, նախապէս համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու կազմակերպումը, չորս տարին անգամ մը, տարբեր երկրի մը մէջ էր որ տեղի կ'ունենար: Կարելի է հաստատել ուրեմն, որ Հայաստանի մէջ 2009ին կազմակերպուած մարզախաղերուն արդիւնքը, թէ՛ մասնակցողներու թիւի, թէ՛ մարզախաղերու կիրարկման, թէ՛ եռանդի ու միջնորդութի տեսակէտէն, ամէն ինչով շատ յաջող կազմակերպում մըն էր:

Նոյն թուականներուն, ամրան սկիզբը, իրագործեցինք նաեւ սկաուտական կազմերու խմբապետներու վերաորակաւորման եւ վկայեալ կարգի դասընթացքները:

Ինչո՞ւ կարեւոր է այս աշխատանքը եւ ի՞նչ թիւերու մասին է խօսքը:

- Կարեւոր է այն իմաստով, որ ուղղուած է խմբապետներու պատրաստութեան, որոնք արժանաւորապէս նախապատրաստուելով պիտի գիտակցին Հ.Մ.Ը.Մ.ի դերին եւ նոր խմբապետներու առողջ ու լրիւ պատրաստութեան կարեւորութեան: Աշխատանքը կատարեցինք երեք հանգրուանով եւ ցամաքամասերու խմբապետներու բաժանումով: Մենք համոզուած ենք, որ այս դասընթացքներուն արդիւնքները նոր խանդ ու եռանդ պիտի ստեղծեն եւ, ինչու չէ, մեր սկաուտական կազմերուն պիտի տան անհրաժեշտ կազմակերպուածութիւնը իրենց ծրագրային աշխատանքները աւելի արդիւնաբեր ձեւով յաջողցնելու համար:

Առաջին դասընթացքը գումարուեցաւ Ֆրանսայի մէջ, ուր մասնակցեցան Եւրոպայի մէջ գործող մասնաճիւղերը: Երկրորդը Միջին Արեւելքի մէջ էր, Հայէպ, իսկ վերջինը Լոս Անճելըսի մէջ էր, ուր ներկայ եղան Լատին Ամերիկա (Արժան-թին) եւ Աւստրալիա: Այս դասընթացքներուն մասնակցող խմբապետներուն ընդհանուր թիւը 100 հոգի էր:

Այլ աշխատանքներ:

- 2009ի Ապրիլին, երբ արդէն մեր նստաշրջանին երկրորդ տարին կը բոլորէինք, Ֆրանսայի մէջ հրաւիրեցինք միջ-վարչական դիւաններու խորհրդաժողով, որուն ներկայ եղաւ նաեւ Յունաստանի շրջանը: Բաւական յաջող արդիւնքով դուրս եկանք, նկատի առնելով որ ներկայ եղան բոլոր շրջանները, իսկ արդիւնաբեր աշխատանք տարուեցաւ օրակարգի ծաւալուն քննարկմամբ եւ լուրջ արդիւնքներով:

Այս տարուան ամրան, որ մեր գործունէութեան վերջին

տարին է, պիտի ունենանք համա-Հ.Մ.Ը.Մ.ական Թրդ բանակումը, կրկին Հայաստանի մէջ: Նշենք, որ 1994էն սկսեալ, չորս տարին անգամ մը, Հայաստանի մէջ կը կատարուի բանակում: Յայտնի է, որ շրջանները մեծ պատրաստութեան մէջ են, որովհետեւ այս տարի պարտաւորութեանք թիւի սահմանափակում կատարել, որպէսզի յարմարաւէտ ձեւով կազմակերպուի բանակումը Բիւրականի մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրէն ներս: 400ի շուրջ հիւրընկալող վայր մըն է: Անցեալ բանակումի մասնակցողներուն թիւը 630 հոգի էր, ինչ որ որոշ դժուարութիւններու դիմաց դրաւ մեզ: Մասնակիցներու թիւերը շատ աւելի են, բայց միջոցները չեն ներեր աւելին: Պատգամաւորական ժողովը որոշեց, որ թիւի սահմանափակում կատարուի, ինչ որ եղաւ շրջաններու մասնաճիւղերու ընդհանուր թիւերու հաշուարկումով: Վերջին երկու բանակումներուն մասնաճիւղերու մասնակցութեան թիւերը նկատի առնելով, բաժնեցիներ երեք հիմնական մասերու, որպէսզի կարելի ըլլայ արդար բաժանում կատարել, Ամերիկաները անջատ, Եւրոպան անջատ եւ Միջին Արեւելքը անջատ: Այսպէս, թիւերու ներկայութիւնը, ըստ ցամաքամասի, աւելի արդար բաժանումի հիմամբ տեղի ունեցած է:

Ներկայիս 550ի շուրջ թիւ մը նախատեսած ենք: Անշուշտ, որ շրջաններէն յաւելեալ թիւ ընդունելու պահանջներ կան: Այս մասնակցութեան հետզհետէ աճող տոկոսը յայտնի կը դարձնէ խանդն ու եռանդը որ կան Հ.Մ.Ը.Մ.ական սերունդին մօտ:

Ընդհանուր բանակումի նախօրեակին, միութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ Արարատեան կարգի դասընթացք, որուն նպատակն է մեր բարձրագոյն կարգի խմբապետներու պատրաստութիւնը: Այսինքն՝ այն խմբապետներուն, որոնք իրենց կարգին խմբապետներ կը ղեկավարեն: Այս ծրագիրը արդէն իր ճամբան առած է: Այսպէս, նիւթերը կը նախապատրաստուին եւ ամէն ինչ պատրաստ պիտի ըլլայ գործնական բանակումին համար, որ տեղի պիտի ունենայ Յուլիս 26-29 (չորս օրուան ընթացքին): Ապա, ընդհանուր բանակումին ընթացքին, թեկնածուները առիթը պիտի ունենան իրենց փորձառական հանգրուանը անցընելու, որուն աւարտին իրենց տուած արդիւնքին համաձայն՝ պիտի ստանան Արարատեան կարգի վկայականը:

Ամրան աշխատանքներէն ետք, մեր նստաշրջանին աւարտին մօտենալով, Կեդրոնական Վարչութիւնը առիթը պիտի ունենայ քննելու իր չորս տարուան աշխատանքները, վերանայելու, արժեւորելու եւ յառաջիկայ Պատգամաւորական ժողովին նախապատրաստուելու: Կը յուսանք, որ այս կատարուած աշխատանքները մեր միութեանական եղբայրներուն կողմէ քննարկուին եւ առողջ տեսութեամբ նաեւ կատարուի ապագայի պատկերացումը:

Իսկ ե՞րբ պիտի գումարուի միութեան Պատգամաւորական ժողովը:

- Նախատեսուած է 2011ի Ապրիլին գումարել միութեան Պատգամաւորա-

կան ժողովը: Անցնող քառամեակին մենք ունեցանք ծրագրաւորումի յանձնախումբ մը, որուն պարտականութիւնը միութեան նոր օրերու հեռանկարն ու տեսլականը ճշդելն էր: Ամերիկայի մէջ խորհրդաժողով մը տեղի ունեցաւ այս իմաստով: Այս յանձնախումբին աշխատանքին արդիւնքը պիտի տեսնենք Պատգամաւորական ժողովին, իբրեւ օգտակար ազդակ՝ ապագայի աշխատանքները երկար ժամանակի վրայ ելլալ կազմակերպուած ձեւով ծրագրաւորելու համար:

Եթէ կարողանալք զանազանել մարզական եւ սկաուտական բաժինները անցեալ շրջանին, ի՞նչպէս պիտի գնահատէիք գերակշռող մարզը:

- Ինչպէս բոլոր գետերը ծով կը թափին, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մարզերն ալ նոյն նպատակին կ'առաջնորդեն, սկաուտական թէ մարզական բաժիններու աշխատանքով, հետեւաբար մէկը միւսէն աւելի գերակշիռ կարելի չէ տեսնել: Բայց մեկնելով թիւերէ եւ շրջաններու մէջ տարուած ներքին աշխատանքներէ, բնական է երբեմն տկարացած տեսնել մէկը կամ միւսը, յատկապէս որովհետեւ գաղութային ներքին նիւթական դժուարութիւնները կրնան իրենց բացասական արդիւնքները ունենալ, սակայն միշտ ալ մեր Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրները ամէն ճիգ ի գործ կը դնեն, որպէսզի դուրս ելլեն այդպիսի կացութիւններէ եւ առաւելագոյնը տան մեր մատուց սերունդին:

Ի՞նչպէս կը տեսնէք Յունաստանի շրջանին վիճակը:

- Անձնական պատկերացումս կրնամ ձեզի փոխանցել: Երեք անգամ ձեր շրջանը եղած եմ: Մտքիս մէջ կու գայ առաջին անգամը, որ 1971ին էր, երբ ես տակաւին պատանի էի: Յաջորդը, 1982ին էր, երբ ներկայ եղանք խորհրդաժողովի մը, որ հրաւիրուած էր միութեան սկաուտական կանոնագիրը մշակելու համար, իսկ երրորդը 1987ին՝ Պատգամաւորական ժողովի: Անձնական տպաւորութիւնս այն էր, որ մենք Յունաստանի մէջ ունէինք շատ մեծաթիւ գաղութ մը, որուն շատ մեծ թիւը ներգրաւուած էր Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս՝ հսկայ աշխատանք տանելով: Հարիւր հազար հոգիի աշխատանքին արձագանգը կար ժամանակին: Այսօր թիւերը շատ նուազած են եւ նոյն ձեւի արձագանգ չկայ: Այդ նուիրեալներուն թիւը նուազած է: Թէ ի՞նչ են պատճառները կ'ենթադրեմ, որ գաղութը կատարած է իր քննարկումները: Ճիշդ չէ միշտ մտածել պատճառաբանութիւններ փնտռելու մասին, աշխատանքի թուլացման շրջան մը անցընելու ժամանակ: Այս կը նշանակէ որ կամքի ընդհանուր թուլացում մը կայ: Սակայն պէտք է ղէպի գարթօնք առաջնորդող տրամադրութիւն ստեղծել, եւ բոլորը քով-քովի գալով այս գաղութին նախկին աշխուժութիւնը վերականգնել: «Այսօր այս ենք» ըսել եւ կենալ ճիշդ չէ: Մենք պէտք է նոր առաջադրանքներ ճշդենք եւ կազմակերպուած ձեւով դուրս գանք ղէպի նոր եւ աւելի աշխոյժ ապագայ:

Ինչպէս բոլոր գետերը ծով կը թափին, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մարզերն ալ նոյն նպատակին կ'առաջնորդեն, սկաուտական թէ մարզական բաժիններու աշխատանքով, հետեւաբար մէկը միւսէն աւելի գերակշիռ կարելի չէ տեսնել:

ԶԻՐԱՐ ԱՄԲՈՂՉԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՑ

(ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՅՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻՆ,
Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ ԿՈՂՄԷ)

Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին անուսով կ'ողջու-
նենք Համազգայինի Հայ Կրթական եւ Մշա-
կութային Միութեան Յրդ Ընդհանուր Ժողո-
վին գումարումը Լիբանանի մէջ, Ժողովի աշ-
խատանքներուն մաղթելով ամբողջական յա-
ջողութիւն՝ ի սպաս Համազգայինի տեւական վերելքին եւ
հայ ժողովուրդի հաւաքական երթին հզօրացման:

Արդարեւ, այս Ընդհանուր Ժողովը տեղի կ'ունենայ հայ
ժողովուրդի պատմութեան անկիւնադարձային մէկ հանգր-
ւանին, երբ Հայաստանէն մինչեւ Սփիւռքեան ոստաններ
հայ կեանքը տազնապի մատնուած է Հայաստան-Թուրքիա
յարաբերութիւններու վերիվայրումներով, Հայ Դատի նորա-
գոյն զարգացումներով եւ հայկական Սփիւռքին սպառնացող
տեսակաւոր դժուարութիւններով:

Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միու-
թիւնը, տարիներու իր վաստակով, մեծ ներդրում ունի հայ
կեանքին մէջ՝ կրթական, մշակութային եւ հրատարակչական
բազմերես գործունէութեամբ: Գործունէութիւն մը, որ յա-
տուկ գոյն եւ դիմագիծ կու տայ հայ կեանքին, բայց նաեւ՝
կ'ազդուի անկէ, բաժնելով այդ կեանքին յաջողութիւններն
ու ընկրկումները:

Հայաստանեան զարգացումները մէկ կողմէ եւ Սփիւռք-
եան դժուարութիւնները միւս կողմէ, այսօր, լուրջ մարտա-
հրակներու դիմաց դրած են բոլորս: Հայ կեանքը այսօր այն
չէ՝ ինչ որ էր երկու կամ երեք տասնամեակ առաջ: Փոխուած
են սերունդներ եւ մտայնութիւններ: Կ'ապրինք դժուար եւ
հետզհետէ աւելի դժուարացող պայմաններու մէջ: Այլեւս գո-
յութիւն ունին նոր առաջնահերթութիւններ: Հրապարակ
եկած են նոր մտահոգութիւններ:-

- Նորաստեղծ գաղութներու մէջ
միութենական կեանքի ստեղծման
հարց:
- Երիտասարդութեան ներգրաւ-
ման հարց:
- Սեփական դիմագիծի եւ ինքնու-
թեան պահպանման հարց:
- Լեզուի եւ մշակոյթի գոյատեւ-
ման հարց:

Այսուհետեւ աւելի շատ իրա-
րու ձեռք երկարելու, գաղութ
գաղութ աւելի ներդաշնակ գոր-
ծունէութիւն ունենալու եւ զի-
րար ամբողջացնելու պարտա-
ւորութեան դիմաց կը գտնու-
ինք:

- Աւան-
դական մեր
արժէքները
պահելով
հանդերձ՝ աշ-
խատանքի
նոր ձեւերու
որդեգրման
հարց:

- Հայեցի
դաստիարա-
կութեան եւ
կրթութեան
ազդու միջոց-
ներու որոնման հարց:

- Եւ տակաւին, մեր ժողովները հալածող մնայուն օրա-
կարգը՝ տնտեսական ինքնաբաւութեան հարց:

Այս բոլորը մեզ կը դնեն ազգին ու պետականութեան
սպառնացող դժուարութիւնները միացեալ ուժերով դիմագը-
րաւելու հրամայականին դիմաց: Այսուհետեւ աւելի շատ
իրարու ձեռք երկարելու, գաղութէ գաղութ աւելի ներդաշ-
նակ գործունէութիւն ունենալու եւ զիրար ամբողջացնելու
պարտաւորութեան դիմաց կը գտնուինք:

Վեց տարի առաջ, Նոյեմբեր 2004ին, Հ.Յ.Դ. Բիւրոյի նա-
խաձեռնութեամբ Լիբանանի մէջ գումարուած Ուղեկից
Միութիւններու Խորհրդաժողովը հիմը կը դնէր այս գործակ-
ցութեան եւ ճամբայ կը հարթէր գալիք աշխատանքներու:

Մեր համոզումն է, որ յիշեալ Խորհրդաժողովի տրամադ-
րութիւններէն մեկնած, այսօր, աւելի քան երբեք, կանոնա-
ւոր, տեւական եւ ծրագրուած գոր-
ծակցութիւնն է, որ զարկ կու տայ
Համազգայինի, Հ.Մ.Ը.Մ.Ի, ՀՕՄԻ,
«Արարատ»ի եւ ուղեկից միութիւննե-
րու աշխատանքներուն, կ'աշխուժա-
ցնէ անոնց շարքերը եւ եւ աւելի ար-
դիւնաւէտ կը դարձնէ հայութեան
ընդհանրական նպատակներուն
անոնց ծառայութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԷՆ ՆԵՐՍ ՍՏԱՑԱԾ ԵՄ ՀՈԳԵԿԱՆ ՄԵԾ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՄ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ՎԱՍՏԱԿԱԻՈՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ
ԵՂԲ. ԶԱԻՆ ՏԵՐՎԻՇԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝ Արմեն Քեօշկերեան ՀԱԼԷՊ

Եղբ. Զաւէն, հաճեցէք ներկայացնել դուք ձեզ, իբրեւ
Հ.Մ.Ը.Մ.ական: Ո՞ր թուականին անդամակցած էք Հ.Մ.-
Ը.Մ.ի շարքերուն:

- Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն անդամակցած եմ 1939 թուակա-
նին, եօթը տարեկան հասակիս, երէց Հ.Մ.Ը.Մ.ական հօրեղ-
բօրս՝ Յարութիւն Տէրվիշեանի առաջնորդութեամբ: Մինչեւ
1946 թուական մնացած եմ գայիկ, ապա սկստական շար-
քերը փոխանցուած եմ՝ սկստական մնալով «Կաքաւ» խումբին
մէջ: Այս խումբին մէջ ստացած եմ սկստական Փոխ Առաջ-
նորդի աստիճանէն մինչեւ Վարիչ Առաջնորդի աստիճան: Հե-
տագային, քննութիւններ տալով ստացած եմ Փոխ Խմբապե-
տի, Խմբապետի եւ Աւագ Խմբապետի աստիճաններ, որոնցմէ
ետք ստացած եմ Հալչպի Մասնաճիւղի Խմբապետի պաշտօ-
նը. բաւական ժամանակ վերջ, Հ.Մ.Ը.Մ.ի 75ամեակին արժա-
նացած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան
«Ծառայութեան» շքանշանին, առ ի գնահատանք երկար տա-
րիներու վաստակիս:

Իբրեւ Հալչպի մասնաճիւղի խմբապետ, ձեր շրջանին ինչ-
պիսի՞ խմբապետներու հետ գործակցած էք եւ այդ օրերուն
ի՞նչպէս յաղթահարած էք օրուան դժուարութիւնները:

- Իբրեւ խմբապետ գործակցած եմ եղբայրներ Արսէն
Դանիէլեանի, Սուրէն եւ Խորէն Նազարեաններու հետ, իսկ
գործակիցներ
ունեցած եմ եղ-
բայրներ Յով-
հաննէս Արա-
պաճեանը, Ալեք-
սան Իսկէնտէր-
եան Միսաք Տէ-
յիրմէնճեանը եւ
ուրիշներ:

Մեր գործու-
նէութեան շրջա-



1958, Զեպտեմբ. ձախէն առաջինը՝ եղբ. Զաւէն Տեր-
վիշեան: Աջէն առաջինը՝ եղբ. Կարօ Թիւթունճեան:

նին ունեցած ենք կարգ մը դժուարութիւններ, որոնք սակայն
յաղթահարած ենք հաւաքական ջանքերով:

Իբրեւ խմբապետ, արաբական ո՞ր բանակումներուն մաս-
նակցած էք:

- 1958ին մասնակցած եմ համաարաբական բանակումին,
Զեպտեմբերի մէջ, մեր կազմը ներկայացնելով խմբապետի աս-
տիճանով: Բոլոր մասնակցող եղբայրները աստիճանաւորներ
էին:

Մասնակցած եմ նաեւ 1959ին Եգիպտոսի մէջ կատարուած
երիտասարդաց շարժման արշաւին՝ մէկ շաբաթ տեւողու-
թեամբ: Իսկ Քեսապի մէջ կատարուած մեր մասնաճիւղի բա-
նակումներուն, պաշտօնիս բերումով, այցելութիւններ
տուած եմ բանակավայրի մեր սկստուներուն, հոն պէտք
եղած թելադրութիւնները տալով բանակողներուն:

Մասնակցած եմ նաեւ միջ-մասնաճիւղային բանակումի մը,
որ կատարուեցաւ 1951ին Պլուտանի եւ ապա՝ Եապրուտի մէջ:

Կրնա՞ք ներկայացնել դրուագ մը, որ պատահած է բանա-
կումի մը ընթացքին:

Պատմելիք դրուագս պատահած է Եապրուտի մէջ: Գիւղին



մէջ, գիւղին տղաքը արագիւ մը քարով վիրաւորուած էին: Արագիւր թռչելով վիրաւոր վիճակի մէջ եկած-հասած էր բանակավայր: Բանակումի պատասխանատու խմբապետը հետեւելով սկաուտական դաւանանքին, որն է՝ «Սկաուտը անասունները կը սիրէ եւ կը պաշտպանէ», անմիջապէս կարմիր խաչի սնտուկը բերել տալով, վիրաւոր արագիւր կը դարձանէ եւ արեւանոցին վրայ կը դնէ, որպէսզի բուժուի: Բայց ասիս, յաջորդ օրը արագիւր կը սատկի: Անմիջապէս որոշում կը տրուի կէսօրէ վերջ թաղումը կատարել: Կը յիշեմ կազմուեցաւ թաղմանական յանձնախումբ մը, որպէսզի թաղումը կատարուի: Մէկը եղաւ առջեւէն դրօշակակիր, երկրորդ շարքի վրայ շեփորախումբ, որուն ետեւէն «մեռելի տէր»երը, ապա՝ բանակումի մասնակցող Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաի եւ Դամասկոսի սկաուտները: Թաղումը կատարուեցաւ, սկաուտներուն վրայ ձգելով խոր յիշատակ:



1961, Քեսապ:

Իբրեւ սկաուտ խմբապետ, ի՞նչ կը տեսնէք անցեալի եւ ներկայի սկաուտութեան մէջ: Ի՞նչ կը թելադրէք ներկայ սկաուտներուն:

-Ներկայիս ունինք բաւական որակաւոր եւ ուսեալ աստիճանաւորական կազմ: Թելադրելի է, որ մեր սկաուտները հետեւին իրենց աստիճանաւորներու ցուցմունքներուն եւ աշխատին Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը բարձր պահել եւ զայն գործադրել:

Բնական է, մեր շրջանը կարելի չէ բաղդատել ներկայ այս օրերու սկաուտութեան հետ:

Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքէն ներս ստացած եմ հոգեկան մեծ գոհունակութիւն, որուն շատ բան կը պարտիմ եւ որեւէ ժամանակ չեմ զղջար Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու համար:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Photos: © Yann-Arthus-Berthaud, La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio WCKEN 2005 PARIS

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select
your Journey

Guided Tours
for 8 Days
or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, ԺԸ. ՄԱՍ

«... Զատկուան Բ. օրը, կէսօրէ վերջ, Պաղտատի կայա-
րանի խաղավայրին վրայ, զոյգ խումբերուն միասին
լուսանկարումէն ետք, ներկաներու ծափերուն տակ դաշտ
կ'իջնեն տղաքը՝ Գեղամ Աքիկիւեանի իրաւարարութեամբ»:

Պէյրուլթ կը յաղթէ Հալէպի խումբին եւ տղքթ. Բեփթըն
Ալթունեան «Ազդակ»ի կողմէ տրամադրուած բաժակը
կը յանձնէ Պէյրուլթի խումբի խմբապետ Յարուլթին Օղլաք-
եանին:

Պէյրուլթ կը մրցի նաեւ քաղաքին հզօր խումբերէն Իւնիոն

Սփորթիվին հետ ու կը պարտուի: «Այս այցելութիւնը սխալ
պիտի ըլլար սահմանափակել ֆուտպոլի պարզ մրցումի ծի-
րէն ներս, կար նաեւ հանդիպումը իտէալին ու ոգեկանին,
միեւնոյն գաղափարին շուրջ հաւաքուած զոյգ մասնաճիւ-
ղերու անդամներուն: Այն սիրալիր եւ ջերմ ընդունելու-
թեան ու եղբայրական հոգածութեան, որուն առարկայ
եղան Պէյրուլթի անդամները, Հալէպ անցուցած քանի մը
օրերու ընթացքին, ամէն գնահատանքէ վեր է»: Եղբայրա-
կան այս անկեղծ վերաբերմունքին համար, Կեղրոնական
Յանձնախումբը 24 Մարտի նիստին շնորհակալութեան
նամակ մը կը խմբագրէ Հալէպի մասնաճիւղին:

Կեղրոնական Յանձնախումբին կը մնար գլուխ հանել
Զահլէ դրկուելիք խումբին խնդիրը: Այս խնդրին առըն-
չութեամբ կային կարգ մը լուծուելիք հարցեր, որոնց հա-
մար Զահլէ կը դրկուի Պօղոս Շահինեան: Կարգադրուե-
լիք խնդիրներն էին. հոն ապրող Նիր Իսթ Ռիլիֆի նախ-
կին որբերուն միացումի հարցը Հ.Մ.Ը.Մ.ին, երեկոյթին
համար արտօնագիր ստանալ եւ տուրքէ զերծ կացուց-
ուելու աշխատանքը, նաեւ ապահովելու Անթիլիասի
նուազախումբին եւ մարզիկ որբերուն մասնակցու-
թիւնը:

Զօր. Կամրլէն 1 Մայիս 1927 թուակիր նամակին
կը միացնէր Մայիս 1-15 կատարուելիք զինուորական
մարզանքներու յայտագիրն ու տոմսերը եւ կը փափա-
քէր «Մեր ներկայութիւնը տեղի ունենալիք խաղերուն
ընթացքին», կը գրէ Կեղրոնական Յանձնախումբը իր
5 Մայիսի նիստին ատենագրութեան մէջ:

Լառնաքայէն նամակով մը կը հաղորդեն տեղւոյն վրայ
Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը՝ ներփակելով ֆուտպոլի խումբին
պատկերը:

Պէյրուլթի Ազգ. Ս. Նշան վարժարանը, որ միշտ մօտ զգա-
ցած է ինքզինք Հ.Մ.Ը.Մ.ին, Մայիսին կը դիմէր Կեղրոնական
Յանձնախումբին, որպէսզի ստանձնէր վարժարանին տարե-
կան մարզահանդէսի դաշտին կարգադրութիւնը, որ տեղի
պիտի ունենար 22 Մայիսին:

Կեղրոնական Յանձնախումբը սիրայօժար կը ստանձնէ
իրեն առաջարկուած գործը. Ժ. Պալեան Յ. Գասապեան, Մ.
Պէյլէրեան, Ա. Գարագաշեան, Ա. Յակոբեան, Յ. Շահինեան,
Յ. Արծրունի, Գազանճեան, Կ. Պետիկեան, Պ. Շահինեան, Ե.
Քէշիշեան, Յարուլթիւնեան, դաշտի բժիշկ Ա. Պէզճեան, այ-
սինքն՝ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր վարիչները իրենք կը ստանձնեն այդ
սրբազան պարտականութիւնը:

«Բոլոր խաղերն ու մրցումները շատ յաջող անցան: Նկա-

տելի էր տարուած աշխատանքը մարզիչ Վարդան Իսկէնտէրեանի կողմէ: Օր-ւան ախոյեան հանդիսացաւ Կարապետ Մերինեան: Այս ողիմպիականին իրենց մասնակցութիւնը բերին Անթիլիասի նուագախումբը եւ Հ.Մ.Ը.Մ-ի կազմը:

«Ներկաներուն Խանդավառութիւնը անսահման էր, մանաւանդ այն ատեն, երբ դպրոցի աշակերտութիւնը հայկական, լիբանանեան ու ֆրանսական դրօշակներով, առաջնորդութեամբ նուագախումբին, տողանցք կատարեց դաշտին վրայ: Հպարտ էր ուսանողութիւնը, հպարտ էր եւ ժողովուրդը, որոնք իրենց եւ հովանաւոր պետութիւններու եռագոյններուն տակ հայ ապրելու եւ հայ մեծնալու ուխտը կը կատարէին...» («Ազդակ», 25 Մայիս 1927):



Կեդրոնական Յանձնախումբը մեծ գոհունակութեամբ կը ստանար Դամասկոսէն 13 Ապրիլ 1927 թուակիր նամակ մը, որ կ'աւետէր մասնաճիւղին վերակազմութիւնը քաղաքական տխուր դէպքերէն ետք: Արդարեւ, գաղութին երիտասարդութիւնը, գլխաւորութեամբ Զարեհ Տօնապետեանին, ուժ կու տայ արագ վերականգնումի: Բոլոր խումբերը, բացի «Տալուրիկ»էն, կը համախմբուին Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին ներքեւ:

«Որքա՛ն գեղեցիկ գաղափար ինքնին, պատանիները իրենք իսկ զգացած իրենց Ֆիզիքականին զարգացման պահանջը, այս օրիս, վերակազմեցին Հ.Մ.Ը.Մ-ը, գիտնալով որ բարոյական եւ մտաւորական զարգացումը ոչինչ է առանց Ֆիզիքականին:

«... Կամք ու յաջողութիւն մաղթելով նորակազմ միութեան, կը յուսանք թէ ազգային մարմիններ, ինչպէս նաեւ հասարակութիւնը, նկատի ունենալով նման միութիւններու անհրաժեշտութիւնը, լաւ վերաբերմունք կ'ունենան անոր հանդէպ:

«Երէկ, 15 Մայիս 1927ին, նորակազմ Հ.Մ.Ը.Մ-ը իր անդրանիկ Փութպոլի մրցումը ունեցաւ «Տալուրիկ» խումբին հետ» (Նորայր, «Ազդակ», 21 Մայիս 1927):

Կեդրոնական Յանձնախումբին կողմէ ամիսներէ ի վեր պատրաստութեան մէջ եղող երեկոյթին յայտարարութիւնը լոյս կը տեսնէ «Ազդակ»ի մէջ: Մայիս 14ի երեկոյթին կը մասնակցին Անթիլիասի նուագախումբը, սկաուտներ ու մարզիկներ: Հանդէսին մարզական բաժինին մաս կը կազմեն շուէտական ու չափական մարզանք, կռիւմարտ, բուրգ, կենդանի պատկեր, հաստատ ձող եւ սուսերամարտ: Այս երեկոյթին առթիւ «Ազդակ» նուիրած է հետեւեալ խմբագրականը՝ «Հ.Մ.Ը.Մ.» խորագրին տակ:

«Մեր իրականութեան մէջ մարզական շարժումը ընդհանուր պատերազմէն վերջ է որ առանձին թափ է ստացեր: Նախքան այդ, շարժումը սաղմնային վիճակի մէջ էր, թէեւ Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ»ը արտակարգ ճիգեր ի գործ կը դնէ այդ ուղղութեամբ: Ներկայիս Հ.Մ.Ը.Մ-ի մաս-

նաճիւղներուն թիւը արտասահմանի մէջ 60ի կը հասնի: Հայաստանի մէջ գոյութիւն չունի, տիրող վարիչները թոյլատու չեն անոր գոյութեան...:

«Այսպէս, ներկայիս արտասահմանը անգամ մարզական խնդրին մէջ կապ չունի երկրին հետ, կէտ մը որ անշուշտ ունի իր որոշ անդրադարձումները գործին վրայ:

Իւրաքանչիւր շարժման կամ կազմակերպութեան համար անհրաժեշտութիւն է մայրենի հողէն եկած շունչն ու ոգեւորութիւնը: Հ.Մ.Ը.Մ-ը, իր կամքէն անկախ, զրկուած է այդ աղբիւրէն, բայց անոր դերը արտասահմանի հայ երիտասարդութեան մէջ ճակատագրական նշանակութիւն ունի:

«Եթէ իրատես աչքով դիտենք հայ նոր սերունդին պատկերը, ոչ միայն մխիթարական պիտի չգտնենք, այլ՝ շատ մը կէտերու մէջ յուսահատական: Զրկուած հայրենի շէնչող օդէն եւ միջավայրէն, ներկայ սերունդը ենթակայ է քաղաքակիրթ կոչուած երկիրներու յորձանքին, եւ որովհետեւ չկայ հաստատուն հիմն ու պատուանդանը, սերունդը կը տարուի այն բաներով, ինչ որ յուրի է: Զանազան մոլորութիւններու, բարոյական առաքինութիւններու խաթարման կողքին մեծագոյն մտահոգիչ կէտը կը կազմէ նոր սերունդին Ֆիզիքական դաստիարակութեան գործը: Մեր խօսքը չի վերաբերիր դրօշներուն մէջ կատարուած շաբաթական երկու պահ մարզանքին, Ֆիզիքական դաստիարակութեան սահմանները շատ աւելի լայն են:

«Ներկայիս բոլոր վայրերու մէջ, մեր գաղթականի պարագան գերծ կը պահէ մեզ զինուորական ծառայութենէ, ըսել է հայութիւնը կը մեղկանայ եւ ուստի, մաքառումներու տենչանքը հետզհետէ կը հայի անոր մէջ: Մինչդեռ ուժն ու խիզախութիւնը ապրելու ճամբայ կը բանան ժողովուրդներու առջեւ: Որքան մեղկ ես, թոյլ ու խուսափող, այնքան շատ կ'ըլլան հարուածողները: Ներկայիս ժանիք պէտք է ունենալ գոյութեան պայքարը յաջողութեամբ առաջ տանելու համար:

«Ահա այս պայմաններուն մէջ հրապարակ կու գայ կարեւորութիւնը մարզական կազմակերպութեան, որը ոչ միայն

պատանին բարոյապէս ու ֆիզիքապէս պիտի կրթէր, այլ նաեւ անոր մէջ պիտի յառաջացնէր ցեղային արժանապատուութեան զգացումը: Տուժպոլի եւ այլ մարզական մրցումները, ազգային յաղթանակներու հեռանկարները կը պարզեն ցեղին զաւակներուն աչքին: Ճիշդ այդ նկատումներով է որ մեր մեծ ազգերը բացառիկ կարեւորութիւն կու տան մարմնակրթանքին:

«Մարմնակրթական միութիւններու կողքին որքա՛ն կարեւոր է սկստական կազմակերպութիւնը զանազան երկիրներու մէջ. այնքան կարեւորութիւն կը տրուի այդ գործին, որ անցած է պետական ծրագրի մէջ: Իսկ մեզի համար բացառիկ արժէք ունի այս պարագան, եթէ գիտակցինք անոր կարեւորութեան, մեզ շրջապատող ներկայ պայմաններուն տակ, մանուկին քերականին հետ, սկստական աւետարանն ու տասնաբանեան ալ պիտի կախենք անոր վիզէն: Սկստարձանագրել տղան կը նշանակէ մանկութենէ զինուորական չարքաշութեան վարժեցնել զայն, իսկ ժողովուրդ մը, որուն մէջ մեռած չէ անկախ ապրելու տենչանքը, ստիպուած է կարեւորութիւն տալ այս շարժման:

«Տարուէ տարի աւելի ձեւ ու մարմին կը ստանայ մեր մէջ մարզական շարժումը: Սահմանափակ չէ վաթսուն մասնաճիւղերու թիւը, եթէ մտցուի հարկ եղած կազմակերպական դրութիւնը: Ուժեղ կազմ ունենալու համար անհրաժեշտ է կեդրոնական վարիչ ձեւը: Գլխաւոր թերին է այս կէտը, որ

ունի Հ.Մ.Ը.Մ.ը: Թէեւ իւրաքանչիւր շրջան ունի իր կեդրոնական վարչութիւնը, իսկ երկու շրջաններ՝ Յունաստան ու Ռումանիա ունին իրենց պաշտօնաթերթերը:


«Սուրիոյ մէջ նոր է Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութիւնը, անցեալ տարուէնէ ասդին թափ է ստացեր գործը՝ շնորհիւ Պէյրութի մասնաճիւղին ի գործ դրած ջանքերուն: Կարեւոր է աւելի հիմնաւորել գործը, դարձնելու համար զայն տեւական եւ լայն զանգուածներու սեփականութիւն: Գործի մը կազմակերպումը երբ դրուած կ'ըլլայ լուրջ հիմերու վրայ, այլեւս ան կ'ապուած չըլլար պատահականութեան, գործը կը քալէ առանց ճիգի, բնական կերպով:

«Իրականացնելու համար Հ.Մ.Ը.Մ.ի առաջադրած լայն ծրագիրները Սուրիոյ մէջ, պէտք է օր առաջ գումարել Սուրիոյ շրջանի մարմիններու համագումարը:

«Իսկ ընդհանուր գործին կազմակերպումը կը պահանջէ արտասահմանի կեդրոնական մարմին» («Ազդակ», 14 Մայիս 1927, թիւ 20):

(Շար. 18)

‘Made from one single slice of natural Australian opal’



Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
 123 Clarence Street
 Sydney 2000
 Australia

Phone: +61 2 9290 2199
 fax: +61 2 9262 1630
 Website: www.classiquewatches.com
 Email: Info@classiquewatches.com

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԵՆԻՍԻ ՀԱԼԷՊԻ ՊԱՏԱՆԻ ԴԷՄՔԵՐԷՆ ՀԱՅԿ ԴԱԲԻԹԵԱՆԻ ՀԵՏ

Հարցազրույցը վարեց՝ Րաֆֆի Սիլվահեան ՅԱԼԷՊ

Սարգական կեանքի մեջ եղած են մարզիկներ, որոնք ունեցած են իրենց ուղին շարունակող կամ իրենց նմանող խաղացողներ, որոնք տարիներու ընթացքին յիշեցուցած են այն անցեալը, որ արձանագրուած է ոսկի տառերով, ախոյեանական փայլուն նուաճումներով: Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի թենիսի պատանի դէմքերէն եղբ. Հայկ Դաւիթեան, շարունակելով իր հօրը, Սուրիոյ երկար տարիներու ախոյեան եղբ. Դաւիթ Դաւիթեանի ճամբան, ընտրած է թենիսի մարզածելը եւ կը հանդիսանայ անոր կրտսերագոյն մասնագետը: 1999ի ծնունդ եղբայր Հայկ իր նախնական ուսումը կը ստանայ Ազգ. Սահակեան Վարժարանէն ներս, փոքր տարիքէն ուշադրութեան առարկան դառնալով թենիսի Սուրիոյ մասնագէտներուն, որոնք կ'երաշխաւորեն ապագային անոր աստղ դառնալը: Եղբայր Հայկ վերջին շրջանին իր մասնակցութիւնը բերաւ արտաքին զանազան մրցաշարքներու, որոնցմէ վերջինը տեղի ունեցաւ Թունուզի մէջ: Ստորեւ եղբօր հետ կատարուած հարցազրույցը:

Կրնա՞ք ընթերցողներուն ծանօթացնել մարզական կեանքի ձեր առաջին քայլերը:

- Հօրս մարզիկ ըլլալը մեծ դեր ունեցաւ մարզական առաջին քայլերուս մէջ, եւ ես երեք տարեկանէս սկսեալ հետեւեցայ իր բոլոր փորձերուն եւ սկսայ իմ կարգիս փորձեր կատարել: Վերջին երեք տարիներուն սկսայ մասնակցութիւնս բերել Սուրիոյ թենիսի ախոյեանութեան մրցաշարքներուն եւ մրցումներ կատարեցի ինձմէ տարեց խաղացողներու հետ եւ կարողացայ արձանագրել յաջող արդիւնքներ:

Վերջերս, մասնակցեցաք Թունուզի մէջ տեղի ունեցած միջազգային մրցաշարքի մը: Ի՞նչ կը փոխանցէք այդ մրցաշարքին մասին:

- Թունուզի մէջ ես մասնակցութիւնս բերի իբրեւ Սուրիոյ ներկայացուցիչ, եւ առաջին երեք մրցումները յաղթելով՝ փոխանցուեցայ կիսաւարտական հանգրուան, ուր պարտութիւն կրեցի Ալճերիոյ ախոյեանէն: Ապա, մասնակցութիւնս բերի արեւմտեան արաբական երկիրներու մրցաշարքին, որ դարձ-



եալ տեղի ունեցաւ Թունուզի մէջ, ուր դարձեալ երեք մրցում յաղթելէ ետք՝ փոխանցուեցայ յաջորդ հանգրուան: Կ'ուզեմ ըսել, թէ այս մրցաշարքերուն մասնակցութեան նպատակս էր նախապատրաստական փորձեր կատարել Սուրիոյ ախոյեանական մրցումներէն առաջ, որպէսզի կարենամ յաջող կերպով ներկայացնել Հ.Մ.Ը.Մ.ը:

Ի՞նչպէս կը դասաւորէք ձեր ժամերը մարզական եւ ուսումնական գետնի վրայ:

- Վերջին շրջանին ես հանդիպեցայ որոշ դժուարութիւններու՝ արտաքին մրցաշարքերու մասնակցութեան պատճառով: Ինչպէս գիտէք, ճամբորդութիւններու հետեւանքով ես շրջան մը բացակայեցայ դպրոցէն, բայց ուսման հանդէպ ունեցած սէրս յաղթահարեց բոլոր դժուարութիւնները եւ ես դարձայ դպրոցիս առաջնակարգ աշակերտներէն մէկը: Ներկայիս փորձերս կը կատարեմ շաբաթական երկու հանգրուանով եւ կը փորձեմ կարելիս ընել՝ դասաւորելու համար զիս հետաքրքրող երկու կարեւոր աշխատանքները:

Հօրդ երկար տարիներու նուաճումները քեզ ի՞նչ պարտաւորութիւններու դիմաց կը դնեն:

- Վստահ, որ այդ յաղթանակներն ու ախոյեանութիւնները զիս մեծ պարտաւորութիւններու առջեւ կը դնեն, որովհետեւ մինչեւ այսօր, երբ մրցումի մը կը մասնակցիմ, բոլորը զիս կը ներկայացնեն իբրեւ Դաւիթ Դաւիթեանի որդին: Ես ոչ մէկ ճիգ պիտի խնայեմ հօրս անունը բարձր պահելու համար: Երազս է, որ օր մը մասնակցութիւնս բերեմ միջազգային բարձր մակարդակի մրցումներու, բարձրացնելու համար Սուրիոյ, Հ.Մ.Ը.Մ.Ի եւ ընտանիքիս անունը, որովհետեւ մարզիկ մը երբ կը մրցի իրմէ երէց եւ կամ փորձառու խաղացողներու հետ, այդ իր դրական ազդեցութիւնը կ'ունենայ իր մակարդակին բարելաւման վրայ:

Ո՞վ է միջազգային այն մարզիկը, որուն կը փափաքիս նմանիլ:

- Դաւիթ Նալպանտեանը, որովհետեւ իր մէջ կը տեսնեմ ուժեղ հայու յատկութիւնները, որոնցմով ան մինչեւ վերջ կը պայքարի իր յաղթանակի նպատակին հասնելու համար: Երազս է, որ օր մըն ալ ես մասնակցութիւն բերեմ թենիսի արհեստավարժ մարզիկներու մրցաշարքերուն:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՐԱՆԱԿՆԻ ԸՆՏԱՄՆԻՔԻՆ ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՓԱՌԱՏՕՆԸ

Թղթակից
ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ

Երեք տարուան ակամայ դադարէ ետք, Կիրակի, 30 Մայիս 2010ին, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին Մայիսեան փառատօնը, հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

Փառատօնին ներկայ գտնուեցան հոգեւոր պետեր, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Աշոտ Քոչարեան, հայկական կուսակ-


ցութիւններու ներկայացուցիչներ, ներկայ եւ նախկին երեսփոխաններ ու նախարարներ, լիբանանեան սկսողական եւ մարզական ֆետերասիոններու ներկայացուցիչներ եւ Հ.Մ.Ը.Մ.ով հպարտ բազմահազար հայորդիներ:

ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔԸ

Փառատօնին բազման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ քոյր Մարո Թագեան: Ան իր խօսքին մէջ լուսարձակի տակ Հ.Մ.Ը.Մ.ի դերն ու առաքելութիւնը հայապահպանման մեր պայքարին մէջ եւ դիտել տուաւ, որ «92 տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ. եղաւ ծննդավայրը սկսողական եւ մարմնակրթանքի: Եղաւ ֆիզիքական, իմացական եւ բարոյական դաստիարակութիւն ջամբող այն միութիւնը, որ Սփիւռքի մէջ բարձր պահեց Եռագոյնը, լծուեցաւ հայապահպանման աշխատանքի եւ հայ-

րենիքի սէրը վառ պահեց նորափթիթ սերունդներու մատղաջ հոգիներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ. եղաւ հայութեան կամքը՝ հայ մնալու եւ հայօրէն ապրելու»:

Քոյր Մարո Թագեան այս առիթով շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին պատրաստակամութիւնը՝ 92 տարի առաջ սկսուած երթը շարունակելու՝ յաղթահարելով ամէն տեսակի դժուարութիւններ: «Հ.Մ.Ը.Մ.ին պիտի տանք անսակարկ ու անհաշիւ: Հ.Մ.Ը.Մ.ին պիտի տանք՝ միասնաբար գործելու եւ միասնաբար վայելելու համար անոր պատիւը: Պիտի տանք այս սիրելի միութեան՝ տէր կանգնելու համար անոր նշանաբանին: Պիտի տանք ի շահ ազգին, հայրենիքին եւ մեզի նայող սերունդին, որպէսզի անաղարտ մնան ազգային մեր դիմագիծը, միութենական ոգին եւ հաւաքական կամքը: Ժամանակն ու պայմանները տկարներուն չեն խնայեր», ըսաւ քոյր Թագեան:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Քոյր Մարօ Թագեանի բացման խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շեփորախումբին նուագով տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, կատարողութեամբ Լիբանանի բոլոր մասնաճիւղերէն երէց-պարմանուհի փաղանգներու: Հնչեցին Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները, որոնց հետ ծածանեցան երկու երկիրներու եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները:

րը: Բոցավառեցաւ անմար ջահը եւ դաշտ մուտք գործեցին գայլիկ-արծիկներու վոհմակներ եւ արի-արեւուշական խումբեր, որոնք կենդանի պատկերներու ճամբով դաշտին վրայ կառուցեցին եկեղեցի մը, ամբողջացուցին Սարդարապատի մանրակերտը եւ կանգնեցուցին Արարատը:

Յաջորդեց ԼԵՎԱՄ-ի բաժակի եւ վահանի տուչութիւնը: Համազգայինի Մե-


լանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանը արժանացաւ թէ՛ բաժակին (իբրեւ առաւելագոյն յաղթանակներ արձանագրած դպրոց) եւ թէ՛ վահանին (իբրեւ առաւելագոյն թիւով մարզիկներով մասնակցութիւն ունեցած դպրոց):

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍԻԸ

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով արաբերէնով խօսք առաւ եղբայր Յակոբ Քէշիշեան: Ան յայտնեց, որ տարիներ անցած են Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութենէն եւ մարզական փայլուն արդիւնքներու կողքին՝ միութիւնը դարձած է դաստիարակիչ միութիւն, սկաուտական եւ մարզական խումբերուն մէջ հասակ առած բոլոր սերունդներուն համար, որոնք դաստիարակած են այն խոր համոզումով, որ առողջ միտքը կը գտնուի առողջ մարմնի մէջ:

Շարունակելով, եղբայր Քէշիշեան հաստատեց. «Այս միութեան համար ախոյեանութիւններ, մետալներ կամ բաժակներ ապահովելը երկրորդական է: Առաջնահերթութիւնը սկաուտու-





թեան եւ մարգրիկներուն մօտ մարգական ոգի սերմանելն է»:

Եղբայր Քէչիչեան իր խօսքին մէջ վկայակոչեց Հ.Մ.Ը.Մ-ի անցեալի իրագործումները եւ բիւր յարգանք թելադրեց այն մեծերուն, որոնք իրենց քրտինքով կերտեցին միութեան փառքի օրերը, դառնալով մէկական օրինակելի տիպարներ:

Իր խօսքը եզրափակելով, եղբայր Քէչիչեան պատգամեց. «Գործեցէ՛ք ի շահ միութեան: Գործեցէ՛ք ի շահ մարգական ոգիի աւելի զօրացման: Գործեցէ՛ք ի շահ Լիբանանի, եւ աշխարհի ո՛ր ծայրն ալ գտնուիք՝ գործադրեցէ՛ք Հ.Մ.Ը.Մ-ը նշանաբան՝ «Բարձրացիր՝ բարձրացուր»ը»:

ԼԻՐԱՆԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ ԽՕՍՔԸ

Խօսք առաւ նաեւ Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի նախագահ Թամմամ Ֆահտ: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը տեղական թէ համաշխարհային առումով ունի իր դերակատարութիւնը, ինչ որ արժանի է գնահատանքի: Ֆահտ աւելցուց, որ սկաուտութիւնը միջոց է պայքարելու յոռի երեւոյթներու դէմ եւ այս իմաստով Հ.Մ.Ը.Մ. էապէս կը ծառայէ իր նպատակին: Թամմամ Ֆահտ հաստատեց նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը այն միութիւնն է, որ կը պատրաստէ տիպար քաղաքացիներ:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Մայիսեան փառատօնին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց ատենադպիր եղբայր Կարպիս Գապասագալեան: Եղբայրը լուսարձակի տակ առաւ 28 Մայիս 1918ին իրագործուած յաղթանակը, որ փաստ մը եղաւ համայն աշխարհին, թէ հայութիւնը գիտէ նահատակուիլ իր դատին, ինքնութեան, հողային պահանջատիրութեան եւ գաղափարներուն համար: Փաստ մը նաեւ, որ գիտէ նահատակութենէն յարութիւն առնել եւ հերոսական ճակատամարտներով յաղթանակներ կերտել:

Հ.Մ.Ը.Մ-ի մասին խօսելով, եղբայր Գապասագալեան ըսաւ. «Տարագիր հայ ժողովուրդին հետ, Հ.Մ.Ը.Մ-ը եղաւ ամէնուրեք, ամէն օր եւ ամէն ժամ: Սերունդներու ազգային գիտակցութեան եւ հայեցի դաստիարակութեան ի խնդիր միութիւնը ոչինչ խնայեց եւ ո՛չ մէկ ճիգ զլացաւ, առողջ միտք ու մարմին կերտեց: Իր վեհատենչ նշանաբանին՝ «Բարձրացիր՝ բարձրացուր»ին ունկընդիր՝ Հ.Մ.Ը.Մ. սորվեցուց ազնուագոյնը՝ մեծին ու փոքրին, եղաւ բոլորին միութիւնը, միութենէ աւելի բան մը, տարագիր ու թափառական Սփիւռքի տարածքին փոքրիկ Հայաստան մը:





PhotoRAFI



Գործեց եւ միշտ պիտի գործէ անհամար ու անհաշիւ սերմանելու եւ բաշխելու ըմբռնումով ու հասկացողութեամբ: Ահա ա՛յս է նաեւ այն գաղտնիքներէն մէկը, որուն շնորհիւ այս միութիւնը միշտ կը մնայ հզօր ու երիտասարդ»:

Իր պատգամին աւարտին, եղբայր Գապասագալեան հաստատեց. «Երթը պիտի շարունակուի ամէ՛ն օր եւ ամէն ժամ, Արարատի չորս ծագերէն մինչեւ Գանձասար եւ Մարութա սար, Պուրճ Համուտէն մինչեւ Սփիւռքի հեռաւոր գաղութներ, մինչեւ իրականացումը մեր մեծ երազին՝ ազատ, անկախ, ամբողջական եւ միացեալ Հայաստանին»:

բողջական եւ միացեալ Հայաստանին»

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԽՕՍՔԸ

Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան այս առիթով խօսք առնելով ըսաւ, որ Մայիս 28ը հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութեան երաշխիքը հանդիսացող օրն է, որ հայութեան համար հպարտութեան եւ յաւերժութեան ցուցանիշ է: Առաջնորդը նշեց, որ Մայիս 28ի յաղթանակը հայութեան ինքնորոշ ապրելու կամքին արտայայտութիւնն է, քանի որ հայերը իրողապէս իրաւունք ունին ապրելու

անկախ եւ ազատ՝ իրենց հայրենիքին մէջ:

Գեղամ Արք. Խաչերեան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը Մայիս 28ի ուխտին հաւատաւոր զինուորն է, որ նմանօրինակ փառատօններու ընդմէջէն կ'արտայայտէ իր նուիրումն ու պատրաստակամութիւնը:

Իր խօսքին աւարտին, Գեղամ Արք. Խաչերեան կոչ ուղղեց քալելու Հայաստանի Ա. Հանրապետութեան յաղթական ուղիէն՝ հասնելու համար Արարատին:

ՅԱՂԹԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ

Հասաւ յաղթական տողանցքի պահը: Սկաուտներ՝ մոկլիներէն մինչեւ հաստատաքայլ երէցներ ու պարմանուհիներ, մարզիկներէն մինչեւ լիբանանահայ վարժարաններու աշակերտներ, հին տարագաւորներ, շեփորախումբեր իրենց տողանցքով տպաւորեցին ներկաները եւ հաստատեցին, որ իրենք գաւակներն են դէպի յաւերժութիւն ընթացող ժողովուրդի մը, որ միշտ ունի յաջորդներ, ունի իր կտակին հաւատարիմներ, երթը շարունակողներ եւ ազգին ջահը բոցավառ պահողներ:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Տողանցքին աւարտին, օրհնութեան իր պատգամը ուղղեց Մեծի Տանն Կիլի-



PhotoRAFFI



կիոյ Արամ Ա. Կաթողիկոս: Ան իր անհուն ուրախութիւնն ու հպարտութիւնը յայտնեց ի տես պարզուած պատկերին համար եւ ըսաւ. «Ի՛նչ գեղեցիկ եւ մեր կեանքը գեղեցկացնող տեսարան է այս: Ի՛նչ գօտեպնդիչ ու մեր կեանքը գօտեպնդող երեւոյթ է այս: Այսպէս եղաւ Հ.Մ.Ը.Մ.ը մեր կեանքին մէջ: Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, Սարդարապատի խորհուրդին մէջ, Արարատը իր աչքերուն դիմաց եւ ազատ, անկախ Հայաստանի տեսիլքը իր կեանքին մէջ վառ պահելով՝ Հ.Մ.Ը.Մ.ը ապրեցաւ, գործեց ու ծառայեց տարիներ շարունակ: Հ.Մ.Ը.Մ.ը մեր կեանքին մէջ սովորական հասկացողութեամբ կազմակերպութիւն մը չեղաւ, մեր բարոյական արժէքներուն առաքեալը դարձաւ, դպրոցի կողքին՝ հայեցի դաստիարակութեան ջատագովը եղաւ: Հ.Մ.Ը.Մ.ը մեր ազգային պահանջատիրութեան յառաջապահ գինուորը եղաւ, մեր հաւաքական կեանքի ու պայքարի տարիներու գործօն ու ամբողջական մասնակի-



ցը դարձաւ», հաստատեց Արամ Ա. Կաթողիկոս: Ապա, Արամ Ա. դիտել տրւաւ, որ Հ.Մ.Ը.Մ. եղաւ ու գործեց ամէն տեղ, տարբեր մարզերու մէջ եւ զանազան մակարդակներու վրայ՝ տիրանալով հայ ժողովուրդի սիրոյն ու յարգանքին, որոնք ձեռք բերուեցան հին ու նոր նուիրեալ միութենականներու շնորհիւ: Մարդիկ, որոնք Հ.Մ.Ը.Մ.ը հայութեան կեանքին մէջ վերածեցին նուիրումի, հաւատքի, արժէքներու ու տեսիլքի

անսպառ աղբիւրի մը, հայապահպանման եւ ազգային ինքնութեան գոյատեւման կռուանի:

Արամ Ա. ըսաւ, որ Հայաստանէն հեռու Հ.Մ.Ը.Մ.ը Եռագոյնը միշտ բարձր պահեց, բարձր ու վեհ պահելով Հայաստանը: Բան մը, որուն համար Հայաստանն ու Սփիւռքը պէտք է երախտապարտ ըլլան այս միութեան: Ան յոյս յայտնեց եւ կոչ ուղղեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը աւելի ուռճանայ, ծաղկի, կառչի իր առաքելութեան՝ հրաւիրելով իւրաքանչիւր հայ ընտանիք իր գաւազը յանձնելու ու վստահելու Հ.Մ.Ը.Մ.ին: Ան իր շնորհաւորութեան խօսքը ուղղեց նաեւ բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնց շնորհիւ լիբանանահայ կեանքը կ'ապրի զգալի ծաղկում մը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին «Պահպանիչ»ով աւարտեցաւ Մայիսեան յաղթանակի փառատօնը:

Աւարտին, տեղի ունեցաւ հրավառութիւն:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՍԵՄԻՆԱՐ-ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ ԵՐԿՐՈՐԴԸ «ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ»

Թղթակից ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպական յանձնախումբին նախաձեռնութեամբ, Ուրբաթ, 14 Մայիսի երեկոյեան ժամը 7.30ին, «Երեւանեան» կեդրոնի «Զաւարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու նուիրուած սեմինար-դասախօսութիւններու շարքին երկրորդը՝ նիւթ ունենալով «Ազգային նկարագրի պահպանման անհրաժեշտութիւնը»:

Օրուան նիւթը փոխանցեց Համբիկ Պիլալեան: Ան հիմանկանօրէն շեշտը դրաւ հայկական պատկանելիութեան կառչածութեան հրամայականին վրայ, որովհետեւ միայն այդ ձեւով կարելի է նուաճումներ արձանագրել, իսկական եւ մնայուն յաղթանակներ կերտել, դիմագրաւել ամէն տեսակի դժուարութիւն եւ մարտահրաւէր: Պիլալեանի համաձայն, իւրաքանչիւր հայու սրբազան պարտականութիւնն է պահել ու պահպանել իր հայկական արժէքները, տէր կանգնիլ անոնց եւ գանոնք փոխանցել յաջորդող սերունդներուն, որովհետեւ այլապէս կարելի չէ գինուիլ այն հաւատքով եւ ուժականութեամբ, որոնք իբրեւ գէնք պիտի ծառայեն բոլոր «ճակատամարտներու» ընթացքին, ըլլան անոնք գինուորական, ազգային, մշակութային կամ մարզական:

Դասախօսը դիտել տուաւ, որ հայկական միութիւններու, անոնց կար-

գին Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը այդ մէկը իրականացնելն է՝ աւելցնելով, որ միութիւնը իր անդամներէն եւ մարզիկներէն կը պահանջէ ըլլալ տիպար եւ օրինակելի, արժանի՝ իրենց կրած շապիկին, բարձրացուցած Եռագոյնին եւ հնչեցուցած Հայաստանի քայլերգին: Համբիկ Պիլալեան շեշտեց, որ այս երեքը սրբութիւններ են, որոնց արժէքին գիտակցելով պէտք է իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ լծուի անոնց բարձրացման ու լաւագոյնս պահպանման:

Դասախօսը անդրադարձաւ մարզադաշտերուն վրայ կերտուած յաղթանակներուն, որոնք հիմնուած պէտք է ըլլան ազգային վեհ սկզբունքներու, հայկականութեամբ թրծուած վճռակա-

Իւրաքանչիւր հայու սրբազան պարտականութիւնն է պահել ու պահպանել իր հայկական արժէքները, տէր կանգնիլ անոնց եւ զանոնք փոխանցել յաջորդող սերունդներուն, որովհետեւ այլապէս կարելի չէ գինուիլ այն հաւատքով եւ ուժականութեամբ, որոնք իբրեւ գէնք պիտի ծառայեն բոլոր «ճակատամարտներու» ընթացքին, ըլլան անոնք գինուորական, ազգային, մշակութային կամ մարզական:



նութեան եւ միութենական հպարտութեան վրայ: Ան հաստատեց, որ յաղթելէ առաջ պէտք է հաւատք ունենալ յաղթանակ կերտելու կարողականութեան նկատմամբ, գիտակցիլ, որ յաղթանակները նիւթով չեն ապահովուիր, այլ՝ կամքով ու պայքարով, որպէսզի այդ յաղթանակը ապրի ու ապրեցնէ:

Համբիկ Պիլալեան Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներուն բացատրեց Լիբանանի մէջ յատկապէս հայկական նկարագրով ներկայանալու, Եռագոյնը միշտ բարձր պահելու անհրաժեշտութիւնն ու իմաստը՝ դիտել տալով, որ եթէ օտարներ ներառուին մեր շարքերուն մէջ, ապա անոնք պէտք է հայկականութեամբ օժուին եւ հայկականով առաջնորդուին: Ան նշեց, որ իւրաքանչիւր նուաճում եւ յաղթանակ փաստ է մեր տիրական ներկայութեան եւ դերակատարութեան:

Աւարտին, Պիլալեան պատասխանեց մարզիկներու հարցումներուն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՉԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՄԻՋ-ՄԱՄՆԱՃԻՂԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ-ՏՈՂԱՆՑՔ՝ ՀԱՒԴԴԻ ՄԷՋ

Րա ֆֆի Սիւլահեան
ՀԱԼԷՊ

Հո վանաւորութեամբ Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի, Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ մասնաճիւղերու սկաուտներուն, մարզիկներուն եւ շեփորախումբերուն, հալէպահայ իրաքահայ Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ Եագուպիէի Ս. Աննա եկեղեցւոյ սկաուտներուն, Կիրակի, 30 Մայիս 2010ին տեղի ունեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 92ամեակին նուիրուած՝ միջ-մասնաճիւղային փառատօն-տողանցքը, Հալէպի «Ռիայէթ էլ Շապապ» մարզադաշտին վրայ:

Իրենց ներկայութեամբ փառատօնը պատուեցին Բերիոյ Հայոց Թեմի Առաջ-

նորդ Շահան Եպս. Սարգիսեան, Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Պետրոս Արք. Մրիաթեան, Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, Հայաստանի հանրապետութեան Հալէպի գլխաւոր հիւպատոս Աշոտ Մանուկեան, Սուրիոյ խորհրդարանի անդամ Սուլմալ Սուլմալեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան, Պասս կուսակցութեան Հալէպի կոմիտէի անդամ եւ մարզական գրասենեակի պատասխանատու Անթուան Տայուպ, Հալէպի

մարզական ֆետերասիոնի անդամ Մունա Հայտարի, Ազգային, գաւառական եւ քաղաքական ժողովի անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներ, բարեսիրական, մարզական եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներ եւ բազմաթիւ հիւրեր ու Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Փառատօն-տողանցքին բացումը կատարուեցաւ պատուոյ շքերթով, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի խմբապետ քոյրերու եւ եղբայրներու կատարողութեամբ: Շքերթը առաջնորդուեցաւ նախագահ Ասատի, Սուրիոյ, Հայաստանի զինանշաններով եւ Հ.Մ.Ը.Մ.ի վահանի ցուցատախտակներով, որոնք գետեղուեցան դաշտին կեդրոնը: Հալէպի շեփորախումբին կատարողութեամբ, փառատօն-տողանցքը բացուած յայտարարուեցաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներով: Արաբերէն լեզուով բացման իօսքը արտասանեց եղբ Աբրահամ Եագուպեան:

Բարի գալուստի իօսքերէն ետք, եղբ. Եագուպեան ըսաւ, թէ Սուրիոյ տարածքին գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ-





ները, շեփորախումբերն ու մարզիկները, Հալեպի մէջ համախմբուած, այսօր բարձր կը գնահատեն երկրի կառավարութիւնն ու մարզական գերագոյն գրասենեակի պատասխանատուները, որոնք միշտ նեցուկ կը կանգնին Հ.Մ.Ը.Մ-ին: Այս առիթով, ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց աջակցութիւնը բերին փառատօնին յաջողութեան:

Ապա, ազգագրական եւ ժողովրդային պարերով հանդէս եկան Համազգայինի «Շուշի» եւ «Սարգարապատ» պարախումբերը, որմէ ետք մարզական իւրայատուկ ցուցադրութիւններ կատարեցին Հ.Մ.Ը.Մ-ի քարաթէի եւ ռիթմիկ մարմնամարզի խումբերը եւ Հայ Սեւ Գօտիներու Միութեան մարզիկները:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան: Ան իր խօսքը սկսաւ ըսելով, թէ «Մայիսեան այս գեղեցիկ օրը տօն է մեզի համար, տօն է համայն հայութեան, որովհետեւ յաղթանակի այս օրը Հ.Մ.Ը.Մ. ո՛չ միայն կը տողանցէ իր գալիկ-արծուիկներով, արիւարենոյշներով ու մարզիկներով, որոնք պարծանքի աղ-

բիւրը կը հանդիսանան մեր ժողովուրդին, այլ՝ միութիւնը իր ուխտը կը վերանորոգէ հաւատարիմ մնալու Աստուծոյ եւ ծառայելու հայրենիքին»:

Եղբ. Տէր Աբրահամեան Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան անդրադառնալով ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը 92 տարիներու ըն-

թացքին մնաց այժմէական: Հայ սերունդները դաստիարակեց ազգային գիտակցութեամբ, գաղափարական կենսունակութեամբ եւ զանոնք պատրաստեց դիմագրաւելու այն բոլոր մարտահրաւէրները, որոնք կը խաթարեն ազգային մեր երթը: Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 92ամեակներուն առիթով, եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան իր խօսքը փակեց ըսելով, թէ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութիւնը արգասիքը եղաւ Մայիս 28ի յաղթանակին, որ ոսկի տառերով քանդակուեցաւ հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ: Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի հերոսամարտերը համայն աշխարհին ապացոյցը տուին, թէ հայր միշտ եղած է յաղթական եւ պայքարած է հասնելու իր նպատակին:

Իր խօսքին աւարտին, եղբ. Բաֆֆի Շրջանային Վարչութեան անունով յուշանուէրներ փոխանցեց Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանին, Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ Պետրոս Արք. Մրիաթեանին, Հայ Աւետարանական համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանին, Հայաստանի Հանրապետութեան Հալեպի գլխ-





խաւոր հիւպատոս Աշոտ Մանուկեանին եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանին:

Վերջապէս հասաւ տողանցքի սպասուած պահը, երբ աւելի քան 2500 սկաուտներ, գայլիկներ ու արծուիկներ, մարզիկներ ու մարզիկուհիներ տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի, Քեսապի, Լաթաքիոյ, Գամիշլիի եւ Դամասկոսի շեփորախումբերուն առաջնորդութեամբ: Տողանցող քոյրերն ու եղբայրները պատուոյ դրօշակներու կողքին բարձրացուցին Սուրիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի զինանշանները, ինչպէս նաեւ՝ գոյնըգոյն դրօշակներ, որոնք յաւելեալ փայլք մը կու տային տողանցքին:

Տողանցքէն ետք խօսք առաւ Բերիոյ



Photo

Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան: Ան ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ը իր փառահեղ երթին համար, ըսելով թէ այս տողանցքով կու գանք հաստատելու մեր նուիրումը սուրիական հայրենիքին եւ անոր նախագահին: Սրբազան հայրը օրուան իտրհուրդին անդրադառնալով ըսաւ, թէ այսօրուան մեր համախմբումը լաւագոյն ապացոյցն է մեր գոյութեան, մեր հաւաքական պայքարին ու

նուիրումին՝ ի խնդիր ազատութեան, արդարութեան եւ անկախ հայրենիքին: Այսօր, հայ ժողովուրդը, ըլլայ հայրենիքէն ներս թէ Սփիւռք, կու գայ խոնարհելու Մայիսեան յաղթանակը կերտող նուիրեալներու յիշատակին առջեւ, վերանորոգելով իր ուխտը՝ հաւատարիմ մնալու այն պայքարին, որ մեզ պիտի առաջնորդէ ամբողջական հայութեամբ ամբողջական Հայաստան:

Հոսկ, փառատօն-տողանցքը իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Յաջորդեց գեղարուեստական ճոխ յայտագիրը: Ազգային-յեղափոխական երգերով ելոյթ ունեցան հալէպահայ երգիչ Գօգօ Ասայեան եւ Գամիշլիէն յեղափոխական երգերու մեկնաբան Տիգրան Յովհաննէսեան, մասնակցութեամբ «Սպիտակ» նուագախումբին:

with the complements of

Restaurant Al-Mayass



ՄԻԶ-ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ ՍԿԱՌԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ 12ՐԴ ԵՒ ԽՍԻՍՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ 16ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Րաֆֆի Սիլահեան
ՀԱԼԷՊ

Հայկական Ցեղասպանութեան 95ամեակին առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդը միջ-մասնաճիւղային Սկաուտ. Խորհուրդներու իր 12րդ եւ խմբապետական 16րդ խորհրդաժողովը կազմակերպեց Ցեղասպանութեան մեծագոյն վկան հանդիսացող Տէր Զօրի մէջ: Խորհրդաժողովը կատարուեցաւ Տէր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ դահլիճին մէջ, մասնակցութեամբ Լաթաքիոյ, Դամասկոսի, Քեսապի, Գամիշլիի եւ Հալէպի մասնաճիւղերու Սկաուտ. Խորհուրդներուն եւ խմբապետական կազմերուն: Խորհրդաժողովին իր մասնակցութիւնը բերաւ Տէր Զօրի սկաուտական կորիզէն ներկայացուցիչ մը:

Տէր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցի հասնելով, խորհրդաժողովին մասնակիցները նախ մասնակցեցան կրօնական կարճ արարողութեան եւ ստացան Ս. Հաղորդութիւն: Ապա, Հայկազ Քհնյ. Մասոյեանի քարոզէն ետք, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ յարգելու համար մեր մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը:

Այնուհետեւ, եկեղեցւոյ դահլիճը անցնելով, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջ. խմբապետ եղբ. Աւետիս Տէրվիշեան «Յառաջ նահատակ» քայլերգով բացուած յայտարարեց խորհրդաժողովը: Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջ. Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան բարի գալուստի իր խօսքով ըսաւ. «Այս տարուան խորհրդաժողովը իր եզակի նշանակութիւնը ունի, որովհետեւ տեղի կ'ունենայ Տէր Զօրի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը ծնունդ առաւ Ցեղասպանութեան յաջորդող տարիներուն եւ իր մէջ առաւ ջարդէն փրկուած փոքրիկները,





պատանիներն ու երիտասարդները, զանոնք պահելու եւ դաստիարակելու հայեցի ոգիով»:

Շրջանային Սկաուտ- Խորհուրդի ատենադպրուհի քոյր Սիրուն Քէշիշեան փոխանցեց Խորհուրդին միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որմէ ետք իւրաքանչիւր մասնաճիւղէ ներկայացուցիչ մը ամփոփ կերպով փոխանցեց մասնաճիւղերու Սկաուտ- Խորհուրդներու գործունէութեան տեղեկագիրները:

Անցնելով ապագայ գործունէութիւններու ծրագիրներուն, Շրջ. Սկաուտ- Խորհուրդի ատենապետը խօսեցաւ յառաջիկային կայանալիք միջ-մասնաճիւղային տողանցքներուն մասին, որոնք տեղի պիտի ունենան Հալէպի եւ Քեսապի մէջ: Ան անդրադարձաւ նաեւ սկաուտական կազմերու բերած մասնակցութեան՝ ազգային եւ պետական ձեռնարկներու: Ապա, պետական սկաուտութեան Հալէպի եօթներորդ վաշտի պետ եղբ. Պօղոս Պալէոզեան փոխանցեց պետական սկաուտութեան կազմակերպած աշխատանքներուն մասնակցութեան անհրաժեշտութիւնը, ինչ որ իր դրական ներդրումը կ'ունենայ միութեան այլ աշխատանքներու իրագործման մէջ: Ժողովականները անդրադարձան նաեւ մասնաճիւղերու սկաուտներուն այսօրուան դիմագրաւած դժուարութիւններուն, որոնց մասին առաջարկեցին յարմար լուծումներ: Խօսուեցաւ նաեւ գայլիկական եւ սկաուտական կարգերու յատուկ սեմինարներու իրագործման մասին:

Միջազգային արեւուշական շարժումի 100ամեակին առիթով, Շրջ. Սկաուտ- Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան շնորհաւորեց մասնաճիւղերու արեւոյշ քոյրերը եւ անդրադարձաւ նոր սերունդի դաստիարակութեան մէջ անոնց ունեցած դերին: Այնուհետեւ, ժողովական քոյրերը պարգեւատրուեցան Շրջ. Սկաուտ- Խորհուրդին կողմէ պատրաստուած յատուկ յուշանուէրներով:

Արդէն իսկ ժամը հասած էր տարեկան բանակումներու օրակարգին: Ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան խօսեցաւ բանակումներու օգտակարութեան մասին եւ շեշտեց, որ սկաուտութիւնը ծնունդ առած է բնութեան մէջ եւ կը զարգանայ նոյն բնութեան գիրկը կատարուող բանակումներով: Ան խօսեցաւ նաեւ 31 Յուլիսէն 8 Օգոստոս տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ բանակումին մասին, որուն Սուրիոյ շրջանը պիտի մասնակցի 36 քոյր-եղբայրներով:

Սկաուտութիւնը հետաքրքրող զանազան հարցերու շուրջ խօսելէ ետք, ժողովը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ղեկավարած Հ.Մ.Ը.Մ.ի յուշաքանդակին դիմաց «Յառաջ նահատակ» քայլերգով:

Յարգելու համար Եղեռնի նահատակներուն յիշատակը, մասնաճիւղերու ներկայացուցիչները ուղղուեցան Տէր Զօրի նշանաւոր կամուրջը, ուր Քահանայ Հօր աղօթքէն ետք՝ քոյրերն ու եղբայրները ազգային-յեղափոխական երգերով մէկական մեխակներ նետեցին Եփրատ գետ, որմէ ետք ուղղուեցան Տէր Զօրի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարան եւ յուշանուէր մը յանձնեցին պատուոյ հիւպատոս Սուրէն Վարդանեանին:





ԶՈՅԳ ՏՈՂԱՆՑՔՆԵՐՈՒ ԱՌԱՆՑՔԻՆ

ՍԵԼԱՆ ՆԱԳԱՐԵԱՆ ՀԱԼԷՊ-ՓԱՐԻՉ

Մէկը՝ Ֆրանսա, Փարիզ, միևնույն ժամանակ, Սուրիա, Հալէպ:

Մէկը Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրութեան 92ամեակ, երկրորդը՝ աւանդական մրցաշարք, «Սուրէն Մուրատեան» բաժակ:

Երկուքին հասարակաց գիծը Հ.Մ.Ը.Մ.ը, իբրեւ հօր կառոյց եւ հաւատամբ:

Սուրիոյ պարագային անցեալի փառքին շուքը, սակայն կրկին վեհաշուք, իսկ Փարիզի պարագային՝ վերածաղկման երազանք ու փափաք:

Իսկ այս երկուքին առանցքին՝ Հ.Մ.Ը.Մ.ական պարզ հանդիսատես մը, որուն համար կեանքը օր մը իմաստ ստացած ու բողբոջած է այդ սիրով:

Մէկ շաբաթ տարբերութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի երկու մասնաճիւղեր, աշխարհի

տարբեր ցամաքամասերու վրայ պանծացուցին Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը:

Այս կարճ տողերուն մէջ զանց կ'առնեմ փառաբանանքը կատարելէ իւրաքանչիւրին արժէքին, մանաւանդ մանրամասնելէ զանոնք: Պարզապէս թուղթի մրոտումը կը միտի անմահացնել կատարուածը:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը, հակառակ գոյութիւն ունեցող բոլոր դժուարութիւններուն, թուե՞լ արդեօք զանոնք, ինչո՞ւ է, զորս ամէնուրեք է՝




մարդուժի, միջոցներու, կարելիութեանց, յաջողեցաւ անխափանօրէն այս տարի եւս, համաձայն իր երկամեայ դրութեան սովորութեան, իրականացրենել հիմանդիրներէն՝ եղբ. Սուրէն Մուրատեանին անունը կրող մրցաշարքը:

Այս տարի կարելի էր եղած կարկինը այնքան մը լայն բանալ, որպէսզի ներգրաւէր Եւրոպայի շատ մը երկիրներ, պատճառը՝ կրկին համընդհանուր դժուարութիւններ, սակայն իր հրաւերին ընդառաջացած էին Ֆրանսայի քաղաքներէն Հ.Մ.Ը.Մ.ի Մարսէյի, Վալանսի մասնաճիւղերը, Նիսի հայկական միութիւնն ու Գերմանիոյ հայկական միութիւնը: Իսկ փարիզեան շրջանէն AZA Իսի Լէ Մուլի-նոյի խումբը իր մասնակցութիւնը կը բերէր մրցաշարքին:

Երկու օրերու վրայ երկարող մրցաշարքը՝ 22-23 Մայիս 2010ին, մարզական խաղերու միջոցով (Ֆութպոլ, պասքէթ) յաջողեցաւ համախմբել հայ երիտասարդներ ու հայկական միջնորդարտի ստեղծման նոր աւիւն տալ:

Խաղերու աւարտին «պար-





տըլոդ» խումբ չկար: Խորհրդանշական էին անոնց որակաւորումները: Կար հայ ընտանիքի զաւակներու միացեալ համախմբումը:

Սակայն պատմութեան սիրոյն կ'արժէ արձանագրել արդիւնքները:-

● Ֆուտպոլ՝ Հ.Մ.Ը.Մ. վալանս առաջին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս երկրորդ, Հ.Մ.Ը.Մ.- «Արծիւ» Մարսէյ երրորդ:

● Պասքէթ՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս առաջին, Նիսի հայկական միութիւն երկ-

րորդ, Գերմանիոյ հայկական միութիւն երրորդ:

Կիրակի, 23 Մայիսին տեղի ունեցաւ փակման հանդիսութիւնը, որուն իրենց ներկայութեամբ պատուեցին Եւրոպայի պատուիրակ, Փարիզի Առաջնորդ Նորվան Արք. Զաքարեան, Հ. Հ. դեսպանի կցորդ Ա. Ալեքսանեան, Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետ-երեսփոխան Անտրէ Սանթինի, հայ եւ ֆրանսացի քաղաքապետութեան կցորդներ:

Հանդիսութեան ընթացքին, շեփորախումբի առաջնորդութեամբ, տողանցեցին մարզիկներն ու Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկաուտական միաւորը, հայկական ազգային եւ հայրենասիրական եղանակներու կատարողութեամբ՝ «Սարդարապատ», «Գետաշէն», «Արիւնոտ դրօշ» եւ այլն:

Պաշտօնական բաժինը վարեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչական եղբ. Լեւոն Պաղտասարեան: Ան բեմ հրաւիրեց պաշտօնական հիւրերը իրենց սրտի խօսքերը արտայայտելու համար: Առաջին հերթին բարեմաղթութիւններով ելոյթ ունեցաւ Իլ Լէ Մուլինոյի քաղաքապետը, ապա՝ Նորվան Արք. Զաքարեան, զոր Հ.Մ.Ը.Մ.-ի մէջ տեսաւ ապագայ դաստիարակուած սերունդը, որովհետեւ՝ «Այս շարժումը կը սորվեցնէ կարգապահութիւն եւ հնազանդութիւն»:

Իր կարգին, Հ.Հ. դեսպանի կցորդ Ա. Ալեքսանեան ողջունեց տողանցող խումբերը, մատնանշելով, որ այս ցոյց կու տայ հայութեան հաւաքական կամքը: Ան նշեց, որ հայութիւնը ամուր հողի



վրայ միահամուռ է, իսկ Հ.Մ.Ը.Մ.ը նախանձի առարկայ է շատ ազգերու համար եւ ընդգծեց անոր անունը բարձր պահելու անհրաժեշտութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան անունով խօսք ուղղեց եղբ. Անդրանիկ Պահարեան: Ան իր շնորհակալութիւնը յայտնեց քաղաքապետին, որ ամէն տարի իր դռները լայն կը բանայ Հ.Մ.Ը.Մ.ին առջեւ, նաեւ բոլորին իրենց բարոյական աջակցութեան համար: Այնուհետեւ տեղի ունեցաւ բաժակներու բաշխումը:



Վերջին խօսքը տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Սիսեռեանին: Ան Կեդրոնական Վարչութեան անունով շնորհակարտեց Հ.Մ.Ը.Մ. Ծրանսի վարչութիւնը, որ չմոռնալով անցեալը կը յաւերժացնէ իր հաւատա-


ւոր անդամներէն եղբ. Սուրէն Մուրատեանի յիշատակը, մրցաշարքի բաժակը նուիրելով անոր անուան:

Եղբ. Սիսեռեան մրցաշարքը բնորոշեց իբրեւ եղբայրական բարձր ոգիով խաղ, որուն ընդմէջէն մարզիկները հա-

սան իրենց նպատակին՝ Հ.Մ.Ը.Մ.ի բարգաւաճման: Եղբ. Սիսեռեան հաստատեց Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը՝ հայապահպանման նուիրական գործը, որ Սփիւռքի մէջ կատարած է ու պիտի շարունակէ կատարել, մինչեւ այն օրը, որ հայ ժողովուրդը պէտք ունի այս միութեան:

Երեկոյեան, ՓԱՍԻ սրահէն ներս պատկերը տարբեր էր: Երգի, պարի ու խրախճանքի մթնոլորտ: Խումբերն ու մարզիկները միաձուլուած էին Հ.Մ.Ը.Մ.ի հովանիին տակ:

Հայկական պարեղանակներ, հաճելի մթնոլորտ ու մանաւանդ մեծ թիւով երիտասարդներու ներկայութիւնը գոհունակութիւն կը պարգեւէր Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան, որ բաւարարութիւն կը ստանար, թէ այս տարի եւս, անգամուսին մը համար ալ յաջողած էր իր պարտականութեան մէջ:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱԳԹԱՆԱԿԻ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ՝ ԱԹԷՆՔԻ ՄԷՋ

Լոռի Պարագեան ԱԹԷՆՔ



Հայոց պատմութեան մէջ Մայիսը յաղթանակներու ամիս է: Պատմութեան վրայ յետադարձ ակնարկ մը մեր ուշադրութիւնը կը սեւեռէ Մայիսեան հետեւեալ յաղթանակներուն վրայ:-

- Շուշիի հերոսական ազատագրում:
- Սարգարապատի յաղթանակ:
- Վասպուրականի դիմադրութիւն:

Այս յաղթանակները կը հաստատեն Մայիսեան պատմական գոլգաղիպութիւնները, որոնցմէ ներշնչուած՝ Հ.Մ.-Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը երկու տարիէ ի վեր կը կազմակերպէ Մայիսեան մարզախաղեր:

Այս տարուան մրցումները տեղի ունեցան Կիրակի, 16 Մայիսին, անցեալ տարուան նման՝ Նէա Զմիռնիի «Փանիոնիոս» ֆուլթպոլի դաշտին վրայ: Մրցումներուն մասնակցեցան փոքրեր եւ պատանիներ՝ 7-15 տարեկան: Մասնակցող մարզիկներուն թիւը հասաւ 110 հոգիի: Մարզական խաղերու կազմակերպումը ստանձնած էր արհեստավարժ մարզիչ եղբ. Նշան Սաւուրեան: Միաժամանակ, կազմակերպական ընդհանուր աշխատանքներու յաջողութեան նպատակով զօրաշարժի կոչուած էին Հ.Մ.-Ը.Մ.ական տարագաւոր սկաուտներ, խորհուրդներու անդամներ եւ Հ.Մ.-Ը.Մ.ական ընտանիքի անդամներ ու ծնողներ:

Հ.Մ.-Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը մասնակցող մարզիկներուն համար պատրաստած էր կարմիր եւ կապոյտ շապիկներ, իսկ մարզախաղերու դատակազմը հագած էր նարնջագոյն շապիկներ: Այսպէս, Եռագոյն դրօշին գոյները

տարածուած էին ամբողջ մարզադաշտին երկայնքին, ուր տեղի ունեցան չորս ժամ տեւողութեամբ հետեւեալ մրցումները: - վազք (տարիքի համեմատ՝ 60, 80 եւ 100 մետր), ոստում, դրօշարչաւ եւ գունդի արձակում (փոքրերու յատուկ՝ 700 կրամ կշռող ծանրութեամբ գունդ):

Մրցումներուն ընթացքին մարզիկներուն առողջութեան կը հսկէր տոքթ. Արամ Գասարճեան:

Մրցումներուն աւարտին, երեկոյեան ժամը 7.30ին, տեղի ունեցաւ մարզիկներու տողանցքը՝ առաջնորդութեամբ Հ.Մ.-Ը.Մ.ի սկաուտութեան դրօշակակիրներուն:

Յունաստանի, Հայաստանի եւ Հ.Մ.-Ը.Մ.ի քայլերգներու ունկնդրութենէն ետք, բացման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.-Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան՝ նշելով Մայիսեան յաղթանակներու իմաստն ու խորհուրդը, Մայիսեան հերոսապատումէն մինչեւ Շուշիի ազատագրումը, Արցախեան ազատամարտի յաղթական աւարտը եւ Հայաստանի վերանկախացումն ու ազգային պետականութեան վերականգնումը:

Ապա, եղբ. ատենապետը հրաւիրեց վեթերան Հ.Մ.-Ը.Մ.ականներ, Շրջանային Վարչութեան եւ Խորհուրդներու անդամներ, որպէսզի յաղթական մարզիկներուն յանձնեն համապատասխան ոսկեայ, արծաթեայ եւ պրոնզեայ յուշամետալներ: Աւելին, բոլոր մարզիկները ստացան մասնակցութեան յիշատակի վկայականներ:

Մարզահանդէսին ներկայ եղաւ Հ.Մ.-Ը.Մ.ի Յունաստանի պատուոյ նախագահ՝ եղբ. Կարպիս Գուլումճեան: Ներկայ եղան նաեւ Ազգային Վարչութեան, Համազգայինի Շրջանա-



յին Վարչութեան ներկայացուցիչներ, Հ.Մ.-Ը.Մ.ի վարչութիւններու անդամներ, վեթերան Հ.Մ.-Ը.Մ.ականներ եւ եկեղեցական հայրեր:

Ներկաներուն համար ուրախ անակնկալ մը եղաւ Հայաստանի թենիսի ազգային հաւաքականի չորս մարզիկներու եւ անոնց մարզիչին ներկայութիւնը:

Հ.Մ.-Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ 65ՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Թղթակից
ԱԹԵՆՔ

Հ.Մ.-Ը.Մ.ի Յունաստանի շրջանի 65րդ ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 23 Մայիս 2010ին, Գոքինիոյ «Զաւարեան» ակումբին մէջ, ներկայութեամբ երեսունհինգ քոյր-եղբայրներու: Ներկայ գտնուեցան Հ.Մ.-Ը.Մ.ի Յունաստանի պատուոյ նախագահ եղբ. Կարպիս Գուլումճեան, Շրջանային Վարչութեան, Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու պատգամաւորներ, Սկաուտական Խորհուրդի պատասխա-

նատուներ, 17 օրինաւոր եւ 6 խորհրդակցական ձայնով ներկաներ, ինչպէս նաեւ՝ հրաւիրեալներ: Կը բացակայէր Սելանիկի մասնաճիւղը: Ներկայ էր Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը՝ Զաւէն Գնունի: Ժողովին ներկայ գտնուեցաւ Պէյրութէն յատկապէս ժամանած Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Կարպիս Գապասաքալեան:

Ժողովը բացուած յայտարարեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան, որ հրաւիրեց Հ.Մ.-Ը.Մ.ի պատուոյ նախագահ եղբ. Կարպիս Գուլումճեանը՝ առժամեայ դիւանի ատենապետի պաշտօնը վարելու, ատե-

նադպրութեամբ քոյր Գոհար Ալիանաքեանի: Լիազօրագիրներու ստուգումը կատարուեցաւ առժամեայ դիւանին կողմէ ու հաստատուեցաւ ժողովին օրինաւորութիւնը:

Այնուհետեւ, ժողովը յառաջացաւ մնայուն դիւանի ընտրութեամբ: Ընտրուեցան եղբայրներ Յակոբ Յովակիմեան եւ Արթին Վարդանեան, իբրեւ նախագահ եւ ատենադպիր:

Ապա տեղի ունեցաւ բանաձեւի, հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու կազմերու ընտրութիւն:

Բանաձեւի յանձնախումբի անդամներ ընտրուեցան եղբ. Յակոբ Պետոյեան, քոյրեր Ռիթա Յակոբեան եւ Ալիս Տէր Արթինեան:

Հաշուեքննիչ յանձնախումբի ան-



դամ ընտրուեցան եղբայրներ Ֆիլիփ Ծերոնեան, Օննիկ Աւագեան եւ Նազար Աւագեան: Արխիւային յանձնախումբի անդամներ ընտրուեցան քոյր Սոֆիա Միքայէլեան, եղբայրներ Պօղոս Տէր Արթինեան եւ Օննիկ Փաթթուքեան:

Ընթացաւարտ Սկաուտական Խորհուրդի կողմէ քոյր Գոհար Ալիանաքեան ընթերցեց Խորհուրդին տեղեկագիրը, որմէ ի յայտ կու գար, թէ մարմինը գործած է հետեւեալ կազմով.- ատենապետ եղբ. Սերգօ Արապեան, քարտուղարուհի քոյր Գոհար Ալիանաքեան, գանձապահ եղբ. Խաչիկ Մինասեան, խորհրդականներ քոյր Ալիս Տէր Արթինեան, եղբ. Օննիկ Աւագեան, Յովիկ Ապրոյեան եւ Սիմոն Ասիպեան: Հետագային կազմին միացած է քոյր Թամար Մինասեան:

Յունաստանի շրջանին մէջ այսօր կը գործէ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական երկու միաւոր, Աթէնքի եւ Գոքինիոյ մէջ, 180 հոգիի մասնակցութեամբ եւ սկաուտ-արենոյշ, երէց-պարմանուհի-աստիճանաւոր, գայլիկ-արծւիկ- մոկլի, թմբկահարներով եւ սկաուտական երկու խորհուրդներով:

Կազմակերպչական մարզէն ներս, Խորհուրդը ի գործ դրած է Վկայեալ կարգի դասընթացքներ: Շրջանային

Սկաուտական Խորհուրդը 2008ին կազմակերպած է միջ-մասնաճիւղային ծրագրական ծրագրական Այա Մարինայի բանակավայրէն ներս: Մէկ ներկայացուցիչով մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. համագումարին: Մասնակցութիւն բերած է տողանցքներու եւ դափնեպսակներու գետեղումներու, ներկայ եղած է ծառատնկումներու: Կազմակերպած է գաթայի հանդիպումներ եւ դասախօսական երեկոներ: Սկաուտական խումբերը մասնակցած են Յունաստանի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ կազմակերպուած ձեռնարկներուն: Խորհուրդը անմիջական կապ պահած է բոլոր միութիւններուն հետ:

Շրջանային Վարչութեան քարտու-



ղարուհի քոյր Մարլէն Տագէսեան ընթերցեց տեղեկագիրը, որմէ ի յայտ եկաւ, որ վարչութիւնը գործած է եօթնանդամ կազմով՝ ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան, փոխ ատենապետ եղբ. Կարպիս Ճանիկեան, ատենադպիր եղբ. Պաղտիկ Գարապաճաքեան, գանձապահ եղբ. Յարութիւն Կիւլթէնեան, խորհրդական եղբ. Արա Պատէլեան, որ հրաժարել է ետք փոխարինուած է քոյր Մարլէն Տագէսեանի կողմէ: Քոյրը ստանձնած է քարտուղարութիւնը, իսկ փոխ ատենապետի պաշտօնը ստանձնած է եղբ. Կարպիս Ճանիկեան:

Շրջանը կը գործէ երեք մասնաճիւղերով՝ Աթէնքի, Գոքինիոյ եւ Սելանիկի մէջ: Կը պահուին պասքեթպոլի, լողի, ճատրակի, վոլիպոլի կրտսերներու մարզական բաժիններ: Սելանիկի մասնաճիւղը կը պահէ պասքեթպոլի եւ փինկ-փոնկի մարզական բաժիններ:

Կազմակերպչական մարզէն ներս յայտնի դարձաւ, որ Աթէնքի շրջանի տեղական վարչութեան անգոյ վիճակին եւ մարզական խումբերու դիմագրաւած դժուարութիւններուն պատճառով, որոշուած է լուծել մարմինը եւ նշանակել նոր կազմ: Շրջանային Վարչութիւնը եւ նորանշանակ վարչութիւնը գնահատելով մասնաճիւղին դիմագրաւած դժուարութիւնները, որոշած են մէկ տարուան համար կասեցնել ֆութպոլի խումբին մասնակցութիւնը յունական Ֆետերասիոնի մրցաշարքերուն:

Վարչութիւնը մէկ ներկայացուցիչով ներկայ գտնուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Փարիզի միջ-դիւլանական խորհրդաժողովին: Երկու տարի շարունակ յաջող կերպով կազմակերպած է Մայիսեան յաղթանակի մարզախաղեր, 90 (առաջին տարին) եւ 110 (երկրորդ տարին) փոքրիկներու մասնակցութեամբ: Կազմակերպած է միջ-վարչական ժողով եւ ընդառաջած է Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէին կողմէ նախաձեռնուած հայ-թրքական փրօթոքոլնե-

րու դէմ ստորագրահաւաքի աշխատանքին:

Նոյեմբեր 2009ին Աթէնք այցելած է Երեւանի պասքեթպոլի աղջկանց «Հատիս» խումբը, որ մրցում մը կատարած է Վիրոնայի խումբին դէմ, Եւրոպայի ախոյեանութեան մրցաշարքի ծիրէն ներս: Խումբին Աթէնք կեցութեան ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը ներկայ գտնուած եւ խրախուսած է մարզասէր ժողովուրդը, որպէսզի բոլորը ներկայ գտնուին հայրենի խումբին մրցումին: Վարչութիւնը այս առիթով հիւրասիրած է խումբին մարզիկները: Վարչութիւնը ներկայ գտնուած է նաեւ թենիսի «Տէյվիս»ի բաժակի Աթէնքի մէջ տեղի ունեցած Հայաստանի հաւաքականի մրցումներուն:

Քննելով նախորդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին որոշումը՝ շրջանի կառույցի փոփոխութեան անհրաժեշտութեան մասին, վարչութիւնը նկատի առնելով որ յանդուգն որոշումներու եւ փոփոխութիւններու կարիքը ունի շրջանը, բայց կառույցի փոփոխութեան անհրաժեշտութիւն չի զգացուիր ներկայիս, առաջարկ ներկայացուց յառաջիկային հրաւիրել արտակարգ Շրջանային Ներկայացուցչական Ժողով, քննելու համար տուեալ հարցը:

Ժողովը յաջորդաբար քննեց կազմակերպչական՝ վարչական, սկաուտական ու մարզական բաժինները, ինչպէս նաեւ դաստիարակչական ու նոր աշխատանքներու ծրագրումներու հարցեր: Քննարկուեցան գործունէութեան աշխատանքներու մասին առաջարկներ

եւ ծրագրուեցան յառաջիկայ քայլերը: Ժողովի աւարտին տեղի ունեցաւ Շրջանային Վարչութեան նոր կազմի ընտրութիւն:

Ընտրուեցաւ հնգանդամ կազմ, բաղկացած հետեւեալ քոյր-եղբայրներէն.՝ Մարլէն Տագէսեան, Յարութիւն Խաչատուրեան, Յովհաննէս Ղազարեան, Յակոբ Յովակիմեան եւ Յակոբ Պետոյեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Ներկայացուցչական ճնշող ժողովը փակուեցաւ աշխոյժ նստաշրջան մը բոլորելու մաղթանքներով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ԿԻՊՐՈՍ

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ե.Մ.Ի ԱԿՈՒՄԲԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԾ ՍՐԱՀԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Թղթակից ՆԻԿՈՍԻԱ

Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի մասնաճիւղը, վերջերս, մեծաշուք ճաշկերոյթով կատարեց իր ակումբի վերանորոգուած սրահին բացումը, հովանաւորութեամբ Կիպրոսի Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեանի, նախագահութեամբ Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի:

Պատշաճ կերպով զարդարուած սրահի մուտքի եռա-



գոյն ժապաւէնը կտրելէ ետք, պետական ներկայացուցիչը իր շնորհաւորութիւնները յայտնեց վարչութեան անդամներուն՝ կատարուած բացառիկ ու բժախնդիր աշխատանքին համար: Ան յարգանքի տուրք մատուցելէ ետք մեզմէ յաւատ քաջանուած անդամներու յիշատակին, ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ե.Մ.ը միշտ պատնէշի վրայ գտնուած է ու կը շարունակէ մնալ՝ իբրեւ գաղութի հայապահպանման ամրոցներէն մէկը:

Վարուժան Արք. իր խօսքին մէջ յորդորեց ներկաները կեանք տալու այս գեղեցիկ սրահին, որովհետեւ առանց այս ընտանիքի անդամներու շունչին ու ներկայութեան սրահը կը վերածուի անկենդան կառույցի:

Եղբ. Յարութի թահմազեանի սեղանապետութեամբ գործադրուող յայտագրին ընթացքին խօսքեր արտասանեցին վարչութեան կողմէ քոյր Մայտա Նշանեան եւ մասնաճիւղի նախկին ատենապետներէն ներկայ գտնուող եղբայրները:

Ճաշկերոյթը շարունակուեցաւ սրտաբուխ նուիրատրութիւններով, ուրախ ու տօնական մթնոլորտի մէջ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՔՈՒԷՅԹԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ



Յովհաննես Սերոբեան ՔՈՒԷՅԹ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի Մեկուսի մասնաճիւղի վարչութեան, հովանաւորութեամբ Քուէյթի եւ Արաբական Մոցի երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ Կորիւն Արք. Պապեանի եւ նախագահութեամբ տէր եւ տիրին Մունիր Դարբինեանի, Ուրբաթ, 28 Մայիս 2010ին տեղի ունեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 92ամեակին

նուիրուած Մայիսեան փառատօն:

Փառատօնին պատուոյ հիւրերն էին Քուէյթի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Ֆաթէյ Չարչօղլեան եւ դեսպանատան առաջին քարտուղար Արմէն Սարգիսեան: Ներկայ էին գաղութի պատկան մարմիններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր ու եղբայրներ եւ 300

հանդիսականներ: Փառատօնին հանդիսաւոր բացումը կատարուեցաւ Քուէյթի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդներով:

Մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Յովակիմեան բացման խօսքով անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծման պատմական հանգրուաններուն: Արժեւորեց Հ.Մ.Ը.Մ.ի



ղերը ազգակերտումի եւ հայակերտումի սուրբ եւ նուիրական առաքելութեան մէջ:

Ապա, արաբերէնով օրուան խօսքը փոխանցեց քոյր Ալիք Շաննաքեան: Այս առիթով, մասնաճիւղին սկառուտութիւնը ներկայացուց կոկիկ յայտագիր մը: Յայտագիրը ընդգրկեց խմբերգ, մեներգ՝ կատարողութեամբ եղբ. Յարութ Արզուկեանի, բուրգի կազմութիւն, կակուղ թաթիկի կանչ, «Վանայ» խումբի պար, մարզական ձեւեր եւ ասմունք:



Յայտագիրը արժանացաւ ներկաներու քաջալերանքին եւ ծափահարութեան: Ապա հնչեց շեփորախումբը, որ առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ.ականներու փառանգը: Յաղթական քայլերով անցան

արիները, արենոյշներն ու գայլիկները: Անոնք խումբ-խումբ շարուեցան դաշտին կեդրոնը՝ հանդիսականներուն դիմաց:

Այնուհետեւ կատարուեցաւ աստիճանատուչութիւն, սկառուտական կարգի փոխանցում եւ լաւագոյն խումբերու գնահատանք:

Յիշատակութեան արժանի է, որ մասնաճիւղին պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, սկառուտական բաժինը ունեցաւ Վկայեալ կարգի խմբապետ եւ խմբապետուհի, յանձինս եղբ. Ծատուր եւ քոյր Դալար Սիւմպիւլեաններու:

Հանդիսութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Բուէյթի Մեկուսի մասնաճիւղի վարչութիւնը Հայաստանի Հանրապետութեան ԶԶամեակի տօնակատարութեան առիթով «Ծառայութեան» շքանշանով գնահատեց երկար տարիներ միութեան ծառայած եղբ. Գէորգ Չաղլասեանը:

Ապա հրաւիրուեցաւ հանդիսութեան նախագահ Մունիր Դարբինեանը՝ յանձնելու համար վարչութեան կողմէ պատրաստուած յատուկ յուշանուէրները Սրբազան Հօր, Հայաստանի Հանրապետութեան դեսպանին եւ դեսպանատան առաջին քարտուղարին:

Հոսակ, հրաւիրուեցաւ Կորիւն Արք. Պապեան՝ արտասանելու համար փակման խօսքը:

Իր սրտի խօսք փոխանցեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Ֆաթէյ Չարչօղլեան:

Փառատօնը վերջ գտաւ «Ով Հայ արի» քայլերգով:

ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԵՂԲ. ԳԵՈՐԳ ՉԱՂԼԱՍԵԱՆ

Եղբ. Գէորգ Չաղլասեան ծնած է Քուէյթ, 1967ին: Երեք տարեկանին ընտանիքով կը հաստատուին Յալէպ: Հինգ տարեկանին արդէն Յալէպի Նոր Գիւղի մասնաճիւղի գայլիկ է: Այնուհետեւ, սկառուտական աստիճանները բարձրանալով Յալէպի մէջ հասած է Վարիչ-Առաջնորդի աստիճանին:

Յետ զինուորական ծառայութեան, 1993ին, կը հաստատուի Քուէյթ:

Քուէյթի սկառուտական շարքերուն մէջ շարունակաբար կը վարէ ընդհանուր խմբապետի պաշտօնը, 1995-1998:

Եղբ. Գէորգ Չաղլասեան կը ծառայէ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական յանձնախումբին, 1996-1998: 2000 թուականէն սկսեալ ան բազմիցս ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի մասնաճիւղի վարչութեան անդամ եւ 8 երկար տարիներ ծառայած է վարչականի հանգամանքով, երկուքը՝ ատենապետի պաշտօնով: Իր պաշտօնավարութեան շրջանին Հ.Մ.Ը.Մ.ի մարզական թէ սկառուտական ճիւղերը արձանագրած են յարաճուն վերելք եւ յաջողութիւններ:

Եղբ. Գէորգ Չաղլասեան 2004ին մասնակցած է Պէյրութի մէջ գումարուած ուղեկից միութիւններու խորհրդաժողովին, իսկ 2006ին, Ամմանի մէջ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Միջին Արեւելքի վարչութիւններու միջ-դիւանական Ա. խորհրդաժողովին:

2008ի Մայիս 28ին, 90ամեակի նուիրուած Յալէպի շքեղ փառատօնին, եղբ. Գէորգ Չաղլասեան գլխաւորած է Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի պատուիրակութիւնը:





Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՕՐԸ ՆՇՈՒԵՑԱԲ ՄԵԾ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ

Գեորգ Պետրյեան ՓԱՍՏԻՆԱ

Հ.Մ.Ը.Մ.ի Փաստափաստային «Ազատամարտ» մասնաճիւղին վարչութիւնը այս տարի գեղեցիկ գաղափարը ունեցաւ քանի մը ժամ իր հովանիին տակ հաւաքել մասնաճիւղին ամէն տարիքի անդամները ու յատուկ յայտագիրով մը նշել մասնաճիւղին օրը, յուսալով որ գալիք տարիներուն այս մէկը կը վերածուի գեղեցիկ ականդոթեան:

Այսպէս, Կիրակի, 25 Ապրիլ 2010ի կէսօրէ առաջ ժամը 11ին, Փաստափաստային նոր Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղին օրը, ներկայութեամբ վարչական կազմի անդամներու, մասնաճիւղի խմբապետ եղբ. Ժիրօ Թաթիկեանի, սկաուտական կազմի մեծ ու փոքր անդամներու, մարզական խումբերու, հին ու նոր Հ.Մ.Ը.Մ.ականներու, ծնողներու եւ ակելի քան 150 հայորդիներու:

Նոր կեդրոնին սրահը նեղ կու գար յատկապէս խանդավառութեամբ գեղուն փոքրիկներուն, որոնք ժամանակէն առաջ արդէն իրենց ծնողներուն հետ լեցուցած էին կեդրոնը:

Աներեւակայելի էր նաեւ Հայ Կեդրոնի շրջափակէն ներս տիրող ընդհանուր հրճուանքն ու մեծ եռուզեռը:

Զեւնարկին պաշտօնական բաժնին իր բացման խօսքին մէջ, վարչութեան ատենապետ եղբ. Պերճ Պետոյեան յայտնեց, որ այսօր բոլոր միութենականներուն համար յիշատակելի օր մըն է: Ան յիշեցուց 33 տարիներ առաջ միութեան հիմնադրութեան պայմանները եւ ընդգծեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղը այսօր իր հարիւրաւոր անդամներով, սկաուտական եւ մարզական կազմերով ու խումբերով գաղութին մէջ դարձած է հպարտալի ներկայութիւն»:

Եղբ. Պետոյեան իր խօսքը միութենականներուն ուղղելով ըսաւ. «Միութիւն մը առանց իր անդամ-անդամուհիներուն



աշխատանքին եւ զոհաբերութեան, առանց նաեւ իր բարեկամներուն, բարերարներուն եւ համակիրներուն աջակցութեան չի կրնար շարունակել կամ յարատեւել, մեծնալ կամ բազմանալ: Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղը այսօր եթէ այս դիրքին հասած է, այսօր եթէ տէրը դարձած է նախանձելի մարզադաշտի մը, այդ մէկը կը պարտի բոլորին, հին ու վարչականներուն, բարերարներուն եւ մասնաճիւղի անդամներուն անսակարկ ճիգերուն եւ աշխատանքին»:

Ապա, մասնաճիւղին վարչութեան անունով յարատեւութեան եւ բարգաւաճման մաղթանքներ կատարելէ ետք, եղբ. Պետոյեան շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց բոլորին՝ միութեան իրենց անվերապահ քաջալերանքին եւ զօրակցութեան համար:

Օրուան հանդիսավար եւ վարչութեան փոխ ատենապետ եղբ. Սարգիս Կարապետեան յայտագրի գործադրութեան անցնելով յայտնեց, որ այս առիթով հրաւիրուած են երկու դասախօսներ՝ Արեգ Գէորգեան եւ Րաֆֆի Համբարեան: Առաջինը պիտի ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ը, իսկ երկրորդը՝ Հայ Դատի հետապնդման մէջ անհատներու գործօն դերակատարութեան անհրաժեշտութիւնը:

Դասախօս Գէորգեան երկլեզու, հասկնալի ու հաճելի ոճով

բացատրեց Հ.Մ.Լ.Մ.ի իմաստը, անոր հիմնադիրներն ու հիմնադրութեան գլխաւոր պատճառները, ու անձնական օրինակներով համեմելով իր խօսքերը շեշտեց «սորվէ՛», «զգա՛» եւ «ապրէ՛» գաղափարները: «Պէտք է գիտնանք, թէ ի՞նչ միութեան կը պատկանինք», շեշտեց դասախօսը ու պարզեց Հ.Մ.Լ.Մ.ի նշանաբան՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը:

Ապա, խօսելէ ետք անհատի մը իր անցեալին իրազեկ դառնալու անհրաժեշտութեան մասին, Գէորգեան ներկաներուն հարցումներ ուղղեց միութեան, անոր գոյութեան եւ գոյատեւման մասին:

Հետաքրքրական եւ հաճելի էր յատկապէս գայլիկներու կամ մարզիկներու բերնէն լսել Հ.Մ.Լ.Մ.ի մասին անոնց տրւած բացատրութիւնները եւ կարեւոր մատնանշումները:

Իր նիւթին աւարտին, դասախօս Գէորգեան նշեց, որ պէտք է միշտ հպարտ զգալ հայութեամբ եւ մանաւանդ Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին պատկանած ըլլալուն համար:

Իր կարգին, օրուան երկրորդ դասախօս Րաֆֆի Համբարեան մտերմիկ զրոյցի ձեւով ներկայացուց իր նիւթը:

Այսպէս, ձեռքին պասքէթի գնդակ մը, աջ կամ ձախ, մեծին կամ պզտիկին նետելով եւ ետ ստանալով՝ շատ հասկնալի լեզուով մը, անգլերէնով, պարզեց իր միտքը:

Գնդակը ուրիշին նետելու եւ վերստին ստանալու գաղափարը վերլուծելով, Համբարեան գործնապէս բացատրեց, թէ մարդոց կեանքին մէջ մեծ տարբերութիւն կայ պարզ ներկայութեան եւ մասնակից դառնալուն միջեւ:

Օրինակ վերցնելով Լոս Անճելըսի պասքէթի խումբը եւ մանաւանդ անոր նշանաւոր անդամ մարզիկ Քոպին, Համբարեան շեշտեց այն տեսակէտը, թէ «մարդ անհատը, ըլլայ ան իր խումբին կամ կեանքին եւ աւելին՝ իր ազգային կեանքին մէջ, ան պարզ ներկայութիւն մը ըլլալով կորսնցուցած կ'ըլլայ իր բաժինը»:

Դասախօս Համբարեան կոչ ուղղեց ներկաներուն, որ իրենց կարելի բոլոր միջոցներով մասնակից դառնան Հայ Դատի բոլոր ձեւի աշխատանքներուն եւ յանուն մեր ժողովուրդի փայլուն ապագային ու գոյատեւման ձեռնածալ չմնան իրենց կեանքին մէջ:

Երկու դասախօսներու գեղեցիկ ու շինիչ խօսքերէն ետք, հանդիսավար եղբ. Սարգիս Կարապետեան ներկաները հրաւիրեց հիւրասիրութեան, որմէ ետք մեծ խանդավառութեամբ եւ ոգեւորութեամբ մասնաճիւղի մարզադաշտին վրայ տեղի ունեցան պասքէթի կարճ եւ փոքր մրցումներ, որոնց աւարտին յաղթական խումբերուն յանձնուեցան մէկական բաժակներ:

Վարչութիւնը, իր կարգին, մարզական պատասխանատու եղբ. Արթուր Գարձեանի դասաւորումով մէկական մետալներ նուիրեց այն բոլոր մարզիկներուն, որոնք մասնաճիւղին անունով վերջերս մասնակցած էին Օրէնճ Քաունթի մասնաճիւղին կազմակերպած պասքէթի մարզախաղերուն:

Այդ օր, Փասատինայի մեծ ու պզտիկ Հ.Մ.Լ.Մ.ականները ապրեցան իսկապէս պատմական օր մը:

ԵՂԲ. ԳԵՈՐԳ ՀԱԼԼԱՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Յառաջդիմասէր»ի եւ Զ.Մ.Ը.Մ. - «Կամք»ի շրջանակ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Արդէն տարի մը անցած է այն օրէն, երբ եղբ. Գէորգ Հալլաճեանը գնաց միանալու գաղափարակից իր երէց ընկերներու՝ երախտաւորներու փաղանգին, կանխահասօրէն հրաժեշտ առնելով իր հարազատներէն, ընկերներէն, բարեկամներէն եւ իր սիրելի եգիպտահայութենէն:



Աղեքսանդրիոյ մէջ ո՛վ չէր ճանչնար եղբ. Գէորգ Հալլաճեանը՝ Հ.Մ.Լ.Մ.- «Կամք»ի մարզիկը, սկստալով, պասքէթպոլի խումբին վարչական պատասխանատուն, միաժամանակ «Յառաջդիմասէր»ի վարչական անխոնջ աշխատողն ու կազմակերպող ուժը:

Արդարեւ, եղբ. Գէորգ Հալլաճեան իր պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը անցուց Հ.Յ.Դ.ի գաղափարական յարկին տակ եւ Հ.Մ.Լ.Մ. - «Կամք»ի հայաբոյր միջնորդտին մէջ: Եղաւ հաւաքական կեանքի թէ՛ շարժող մասնիկը եւ թէ շարժիչը միաժամանակ: Անողոք հիւանդութեան վերջին երեք տարիներուն ան վարեց տեղական կոմիտէի ներկայացուցիչի պարտականութիւնները:

Երկար տարիներ եղած է Պօղոսեան Ազգային Վարժարանի հոգաբարձութեան անդամ եւ Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ պայծառութեան ժրաջան ծառայող:

Եղբ. Գէորգ Հայաստանի եւ հայութեան հանդէպ անվերապահ սէր ու հաւատք ունէր: Ինչ որ հայկական էր սրբութիւն էր իրեն համար: Սիրահարն էր հայ երաժշտութեան եւ հարուստ մշակոյթին, մղում տուողը ու քաջալերողը իր կողակիցին՝ Մարիային գեղարուեստական գործունէութեան ծրագիրներուն:

Զինք ճանչցողներէն շատերը տակաւին չեն հաշտուած այն ցուրտ իրականութեան հետ, որ Գէորգին նման եռանդուն եղբայր մը անժամանակ բաժնուած է իր միջավայրէն:

Հողը թեթեւ գայ վրադ սիրելի ընկեր եւ եղբայր: Խունկ ու ծաղիկ քաղցր յիշատակիդ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՕՇԸ

**Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ**

Դրոջ բառացիորէն կը նշանակէ քանդակուած պատկեր կամ արձան, յատկապէս աստուածներու նուիրուած: Այս բառը առնուած է պահլաւերէնէ (հին պարսկերէն):

Բանասէր Ստեփանոս Մալխասեանի համաձայն, դրոջ կը նշանակէ ձողի մը ծայրին կցուած լաթ մը, որ կը կրէ որեւէ ազգի ազգային գոյները կամ նշանները:

Անցեալին թէ ներկայիս ազգի մը դրոջ իր վեհագոյն արժէքն է:

Հին օրերուն, երկու կողմերու պատերազմները կը դադարէին, երբ մէկ կողմը գրաւէր միւս կողմին դրոջն ու կուռքերը եւ կը նկատուէր յաղթական:

Դարերու փոփոխութեամբ դրոջի հանդէպ ժողովուրդի մը ունեցած մեծ սէրն ու յարգանքը չէ փոխուած:

Ինչպէս բոլոր ազգերը, հայն ալ ունեցած է իր ազգային դրոջը: Հայկական դրոջը ոսումնասիրուած է մասնաւորաբար Մխիթարեան հայրերու կողմէ:

Հայր Ղեւոնդ Ալիշան, մէկուկէս դար առաջ, հայ ազգային դրոջը ներկայացուցած է այսպէս՝

Ո՛վ եռափայլ եռախորհուրդ,
Կարմիր, կանաչ, կապոյտ հայոց...

Ուրիշ տեղ մը՝

Կարմիր, կանաչ եւ կապոյտ
Սաւառնեալ գրոհից դրոջք...



տոհմը կ'անցնէր իշխանութեան գլուխ՝ իր տոհմին դրոջը կը դառնար ամբողջ պետութեան դրոջ: Այսպէս, Արշակունիներն ու Բագրատունիները կը գործածէին ծիրանի գոյնի դրոջ մը, որուն վրայ կար արծիւ մը, որ բռնած էր թագաւորական խաչագլուխ գաւազանը:

Հայ թագաւորական

կան կամ իշխանական ընտանիքներու ընդհանրապէս գործածած նշանը արծիւ կամ առիւծ էր, մինչեւ Ռուբինեան թագաւորեան անկումը:

Հայ թագաւորական կամ իշխանական դրոջներու գոյները ընդհանրապէս կարմիր եղած են, գործածուած են նաեւ կապոյտ, կանաչ եւ սպիտակ գոյները:

1918ին, երբ Հայաստանի Հանրապետութիւնը հռչակուեցաւ, առաջին առիթով որոշուեցան հայկական դրոջին գոյները՝ կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն:

Դրոջին պատրաստութեան մէջ բաժին ունեցած են Գարեգին Ա. Յովսէփեանցի, Մանուկ Աբեղեանի եւ Ստեփանոս Մալխասեանցի նման ականաւոր գիտնականներ: Առարկութիւններ եղած են միայն նարնջագոյնի դէմ, սակայն օրուան վարչապետ Քաջազնունիի պնդումով՝ նարնջագոյնը մուտք գործած է մեր դրոջին մէջ:

Քաջազնունիի պնդումին մէջ կայ գեղագիտական նկատում, առաւել, ըլլալով ճարտարապետ, ան լաւ ուսումնասիրած պէտք է ըլլայ հին յունական ճարտարապետութիւնը: Յոյները, իրենց տաճարներուն մէջ կը գործածէին այս երեք գոյները, տաճարի մէջ գտնուող սիւները կը ներկուէին կարմիր եւ նարնջագոյն, իսկ տախտակամածը՝ կապոյտ:

Հայկական Եռագոյնը իր կազմութեան առաջին օրերուն չէր իմաստաւորուած. հետագային է, որ իմաստաւորուեցաւ, այսպէս. -


Կարմիրը կը ներկայացնէ հայոց թափած արիւնը:

Կապոյտը կը ներկայացնէ հայոց պայծառ երկինքը:

Նարնջագոյնը կը ներկայացնէ հայու աշխատանքին խտացումը:

Ուրեմն ըստ Ալիշանի, հայ դրոջը ունի կարմիր, կանաչ եւ կապոյտ գոյներ:

Հայաստանի մէջ իւրաքանչիւր նախարարական տոհմ ունէր իր ուրոյն դրոջը եւ երբ նախարարական



ԿԵՐԱՐՆԿԱԿԱԼ



Ինչպէս անունը ցոյց կու տայ, կերպրնկալը նիւթ մըն է, որ դիւրութեամբ կը փոխէ իր կերպը կան ձեւեր:

Կերպրնկալը պատրաստուած է քիմիական նիւթերէ:

Առաջին անգամ 1855ին, անգլիացի քիմիագէտ Ալեքսանտր Փարքս ստեղծած է կերպրնկալ նիւթը:

Կերպրնկալը կը գործածուի շիշեր, պնակներ, գաւաթներ, տարբեր տեսակի իրեր, աթոռ, սեղան եւ խաղալիքներ շինելու համար:

Կերպրնկալէ շինուած իրերուն յատակը կը գտնենք թիւեր, որոնք թուականը ցոյց կու տան, թէ անոնք ի՞նչ նիւթով շինուած են:

Օրինակ, 5 լիթր ջուրի շիշերուն տակը, եռանկիւնի մէջ դրուած թիւ 5 կը տեսնենք, այդ շիշերը պէտք է գործածուին մէկ անգամ եւ երբեք պէտք չէ մնան արեւուն տակ: Որեւէ կերպրնկալ նիւթ, որուն մէջ ուտելիք կամ խմելիք կը պահուի, պէտք չէ տաքութիւն տեսնէ, այլապէս ան կը դառնայ վտանգաւոր:

ՁՈՒԿԵՐՐԸ

Աշխարհի վրայ 24 հազար տարբեր տեսակի եւ գոյնի ձուկեր կան, որոնք կ'ապրին ծովերու եւ ովկիանոսներու մէջ:

Ձուկերը կը շնչեն ջուրին մէջ: Անոնք չեն կրնար ապրիլ ջուրէն դուրս: Գրեթէ բոլոր ձուկերը ձկնիկներ կը ծնանին հաւկիթ ածելով:

Ձուկերը կ'ունենան ոսկոր, փուշ, տաքակ մարմին, պոչ եւ երկու լողակ, որպէսզի լաւ լողան: Անոնք կ'ուտեն ջուրին մէջ ապրող միջատներ, խոտեր եւ պզտիկ գորտեր:

Ինչպէս նկատած էք, ձուկերը միշտ շարժուն վիճակի մէջ կ'ըլլան, որպէսզի աւելի մեծ ձուկ մը գալով զիրենք չուտէ: Ճիշդ այդ պատճառով անոնք կը պահուրտին ժայռերու ետեւը կամ քարայրներու մէջ, որպէսզի մեծ ձուկերը զիրենք չուտեն: Կան ձուկեր, որոնք իրենց մարմինը կ'ուռեցնեն, որպէսզի մեծ ձուկերը խաբուին եւ հեռանան իրենցմէ: Ուրիշներ իրենց մորթին վրայ փուշ ունին, թշնամիները կը վախնան իրենց մօտենալու: Իսկ ուրիշներ (ձուկերու խումբերու) մէջ մտնելով կը փախչին անոնց հետ:

Պզտիկ ոսկէ ձկնիկները կրնան մինչեւ 20 տարի ապրիլ:

Ձուկեր կան, որոնք ձայներ կը հանեն իրենց ակռաները իրարու քսելով, իսկ ուրիշներ շնչելու ընթացքին ջուրին մէջ ձայներ կը հանեն...

Ձուկերը շատ զօրաւոր լսողութիւն եւ տեսողութիւն կ'ունենան:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:

Ասեղ ունի անհամար, բայց ոչ մէկ հագուստ չէ կարած իրենց համար:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր խոզանակ):



Տարբեր Յայտագրով



Էլի Յուլիշեան

ՍՈՏՈՒՔՈՒ

4			5				8
	3		9	6		7	
		7	4		6		
	5		8	9		2	
9		1			3		7
	7		6	3		5	
		5		9		1	
	1		5		3		4
3				7			6

Յորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

5	1	2	7	9	3	4	8	6
7	8	3	6	2	4	1	9	5
4	6	9	8	1	5	7	2	3
3	7	1	2	5	6	9	4	8
6	2	4	9	3	8	5	1	7
8	9	5	4	7	1	3	6	2
1	4	7	5	8	2	6	3	9
9	3	8	1	6	7	2	5	4
2	5	6	3	4	9	8	7	1

Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Ամերիկացի թենիսիստ:
- Սուրբահայ նախկին մամուլէն - Դրկից գիրեր:
- Կիներ - Օձադանակ:
- Ջերմուկներ գտնող իշապանը - Չորցուած թըրիք:
- Պալթեան մայրաքաղաք - Խորհրդանշալին պատմուածք - Յոգնակերտ մասնիկ:
- Լ.Օ.Սաչի մասնաճիւղերէն - Կանեփէ պարան:
- Անծին այծ - Նախաճաշիկ:
- Երկրի - Առնչութիւն - Մանրակծծի:
- Յովսէփ Էմինի ծննդավայրը - Փոքրացնող մասնիկ:
- Յարաբերական դերանուն - Ափրիկեան գետ - Արական օտար անուն - Չայնանիչ:
- Փշարից ընդաբեր բոյս - Յաճախ - 24 ժամ - Մեծ մայր:
- Ժամանեցին - Իգական օտար անուն - Ժամացոյցի վաճառանիչ մը:
- Յուցական ածական - Նշան - Ջութակի պրկոց:
- Ժանտահոտ ձարեղ կենդանի - Արաբ իշխան - Արական օտար անուն:
- Մեսրոպ Մաշտոց հո'ն թաղուեցաւ:
- Որաներու շեղ - Կրտուած ոչխար:
- Արժէքի կէտ - Ակադեմիա:
- 12 ամիս - Նաւահանգիստ՝ Սել ծովու ափին - Համեմը շատ:
- «Տորմիւլա 1ի Փինալնտացի մրցավարորդ:
- Վերակացու իշխան - Տառի մը դրացիները - Ծանուցանել:

ՈՒՂԱՀԱՅԵԱՑ

- Կողով - Կահագործութեան յարմար փայտով ծառ:
- Իգական անուն - Ընկեր - Կանացի կոշական բառ:
- Աստուածային - Այբուբենէն - Ստացական ածական:
- Նախահօր կողակիցը - Դալուկ - Ջրային գագան - Յապաւուած՝ արաբական պետութիւն:
- Խաբեբայ - Եղելութեան հանդէպ առարկայական մօտեցում ունեցող - Յոգնակերտ մասնիկ - Անխելք:
- «Նահապետ» գրչանունին տէրը - Արաբական ոստան - Ոչխար:
- Մէկը - Ծառի խէժ - Հ.Մ.Ը.Մ.ի փինկ - փոնկի աստղերէն:
- Նոյ՝ օտարացած - Երաշխէպ - Ոլոր - Հաստատական պատասխան:
- Քուռակ - Կանաչ լուբիա - Խորք:
- Տեղեկութիւն - Իտալական գետ - Հայ նահապետ - Ծանրութեան միաւոր:
- Լերան անարեւ կողմը - Քներգ - 1998ի Ողիմպիականները հիւրընկալած քաղաքը:
- Մասնակցիլ - Խաղողի եփած քաղցու - Չայնանիչ - Այբուբենէն:
- Մայթ - Թմրեցուցիչի հիւթով բոյս - Երկթեւ միջատ մը:
- Հնձուած ու չորցուած խոտ - Շունիտ - Նքոյր:
- Մէկ ամբողջութիւն կազմող կառոյցներ - Դրամանիչ մը:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
1																
2																
3																
4																
5																
6																
7																
8																
9																
10																
11																
12																
13																
14																
15																
16																
17																
18																
19																
20																

ԹԻՒ 184 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՐՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															



Harout Arabian